

1931-1932

ՀԱՌԱՐԱՆ ՄԻԷՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 1931 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻԻ 1-2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

«ՀՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»Ի Դ. ՏԱՐԻՆ

ՏՐ. Ճ. ՄԷՐԻԼ

ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ

ՓՐՈՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՆՔ

ՓՐՈՖ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՀՍԿԱՅ ՔԱՐՈՁԻՉՆԵՐ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԵՌԵՐԸ

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍՅԱՆ

ՄԵԾԱԲԱՂՁՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՈՒՂԵՐԶ «ՀՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»Ի

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՉ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԻՐԱԶԵԿ

Ե. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿ. ԵԱՆ Ը. ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(ՕՐ.) Յ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՇԵՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱԽՏԸ

ԹԷ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ ԻՆՉՈՒ ՀՆՉԵՑԻՆ

ԹՐԳՄ. Յ. ՊԱԳՄԱԼԵԱՆ

ՈՒՂԵՐԶ

ԱՐՏ. ԵՊՍ. ՍԻՐՄԷՆԱՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Արսունասէր՝ Վեր. Կ. Յարութիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խոյոքեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգիրն է 150 դրուշ
սուրի Սուրիոյ համար, և մէկ ու կէս
տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըր-
կուիր էթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօդուածներու համար
պէտք է ղրկել փոսթի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, զիւրըն-
թեռնիլի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ՁԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԻՔ
«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»ԻՆ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն հա-
մար իւրաքանչիւր տողին գինն է 10 դրշ.
սուրիական. վեցամսեայ և աւելի եր-
կարատե ծանուցումներու պայմանները
հասկնալու համար գիմել «Նոր Աւետա-
բեր»ի, B. P. 287, Alep.

ՄԻ՛ ՈՒՇԱՆԱՐ

ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի
ՄՐՑՈՒՄԻՆ

ՁՐԻ Ուաթըրմէնի ինքնահոս գրիչ
մը կամ ֆրանսկն. Lip գըր-
պանի ժամացոյց մը պիտի տրուի բո-
լոր անոնց որ 1931, Յունվ. 1 էն մինչև
Մարտ 1, 16 բաժանորդներ կը գտնեն և
անոնց լման բաժնեգիրները գանձելով
կը ղրկեն մեզի:

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

16 ՏԱՐԵԿԱՆԷ ՎԱՐ ԵՐԿՍԵՌ ԲՈԼՈՐ
ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

1931 ի միջոցին

Գրեթե ունէ պատմուածք կամ իրա-
կան օղէ պատմութիւն մը, որ պիտի
ըլլայ

1. Մաքուր ու ուղիղ լեզուով մը,

2. Հետաքրքրական և կրթիչ,

3. Ոչ աւելի քան 150 բառերէ բաղ-
կացած,

4. Թարգմանութիւն կամ ինքնու-
տիպ երեակայութեան արգիւնք, կամ
ունէ աղբիւրէ մը լսուած և յիշողութե-
նէն վերարտադրուած: Թարգմանու-
թեանց և յիշողութենէ վերարտադրու-
թեանց աղբիւրները պէտք է յայտնուին:

Ուսանողները իրենց գրութիւնները
պէտք է յանձնեն իրենց պատկանած
դպրոցին տնօրէնութեան, որ աշակեր-
տին տարիքը և գրութեան անոր պատ-
կանիլը հաստատող երկառղով մը պէտք
է ղրկէ խմբագրութեան:

Մրցումը պիտի սկսի Յունուար 1 ին
և պիտի տեւէ մինչև Մարտ 1, որուն մի-
ջոցին առաջնութիւնը շահողը պիտի
ստանայ 300 դրուշ սուրի. , Բ. աստիճա-
նը շահողը 200 դրուշ սուրի. և Գ. աս-
տիճանը շահողը 100 դրուշ սուրի.:

Շահող կամ չշահող ունէ մէկ գրու-
թիւն երբ յարմար տեսնուի պիտի հրա-
տարակուի ՄԱՆԿԱՆՑ ԷՋԻՆ մէջ:

Չշահող դպրոցականները իրաւունք
պիտի ունենան կէս գինով «Նոր Աւե-
տաբեր» ստանալ, որ պիտի ղրկուի երբ
ան 75 դրուշ սուրիական ղրկէ խմբագ-
րութեան: Երբ մրցումի առաջին շըր-
ջանը լրանայ, պիտի սկսին Բ. և Գ.
շրջանները յաջորդաբար: Շահողները
կրնան ամէն շրջանին մէջ ալ մասնակցիլ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 1931 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻԻ 1-2

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի Դ. ՏԱՐԻՆ

«Նոր Աւետարներ» այս թիւով իր չորրորդ տարին կը թեւակոխէ: Անոր հրատարակութեան համար առաջին առաջարկը ասկէ գրեթէ հինգ տարի առաջ Աւետ. Միութեան կողմանէ հաստատուած էր, և այս նպատակաւ աշխատելու համար հինգ անդամներէ բաղկացեալ մարմին մ'ալ ընտրուած էր:

Նոր տարուան առթիւ շատ օգտակար կրնայ ըլլալ անցեալի վրայ յետադարձ ահնարկ մը նետել և այս թերթին միջոցաւ յառաջ եկած, ըլլայ քիչ, բարիքը նկատի առնել: «Նոր Աւետարներ» ի հրատարակութիւնը զոհողութեամբ կարելի եղած է: Արդեօք կ'արժէ՞ր, արդեօք անոր հրատարակումով ինչ օգուտ արտադրուած է:

«Նոր Աւետարներ» ի հրատարակումովը նոր գործիչ մը ստեղծուեցաւ եկեղեցիներու համար: Անոր երևումէն առաջ Միութիւնը չունէր օրկան մը եկեղեցիները պաշտօնապէս ներկայացնելու համար: Համայնքի գիտակցութիւնը և միութեան ոգին, որ անցեալ չորս տարիներու միջոցին աստիճանաբար պարացած են, մասամբ այս օրկանի ազդեցութեամբը յառաջ եկած են: Միութեան ծառայող այսպիսի թերթի մը գոյութիւնը ուշադրաւ երևոյթ մըն է:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք թերթը կանոնաւոր կերպով ընթերցող մեր բարեկամներուն, սակայն կը խորհինք որ այս հրատարակութեամբ անոնց համար օգտակար ծառայութիւն մը մատուցուած է: Թերթի մը պաշտօնն է տեղեկութիւններ քաղել և զանոնք

հասարակութեան ներկայացնել, հին կամ նոր գաղափարներու և իտէալներու անոր ուշադրութիւնը հրաւիրել: Ամէն մէկ մարդուն անկէ կազմել իր կարծիքը, թերթին գործն է հաւաքուած նիւթերը ամէնուն ներկայացնել: Ամէն ընթերցող պէտք է ընտրէ և օգտագործէ իրեն պէտք եղածը: Շատ մը յօդուածներով, եկեղեցիներու ընթացիկ կեանքէն և Միութեան ժողովներէն առնուած լուրերով, արտասահմանի կրօնական և ընկերային դէպքերու և շարժումներու մասին տեղեկութիւններով, առողջապահական գրութիւններով, ուրիշ լեզուներէ թարգմանուած մասնաւոր յօդուածներով թերթը ջանաց այս նպատակը իրագործելու: Մանուկներու յատկացուած էջը պատմութիւններով և հանելուկներով հաճելի ընծայուեցաւ: Խմբագրին ընդունած շատ մը նամակներուն համեմատ թերթին ամէն մէկ թիւը հայրենիքէն ընդունուած նամակի մը պէս թուեցաւ:

Նոյնպէս մեր շնորհակալութիւնը կը յայտնենք յօդուածագիր պարոններուն և տիկիներուն: Միւսնոյն աստե՛ն, սակայն, կը խորհինք որ թերթը ասոնց համար ալ ծառայութիւն մատուցած է: Թերեւս տոտր անուղղակի մէկ փաստը կրնայ նկատուիլ հրատարակութեան զրկուած յօդուածներու թիւին աւելնալը: Գանդի թերթը բեմ մըն է, անոր ուկնդիրներն են մեր բոլոր ժողովուրդները, նոյնիսկ տոնոյմէ դուրս ուկնդիրներ կան: Փափաքողը կրնայ բեմ ելլել և խօսիլ: Ասկէ աւելի առիթ մը

կրնա՞յ ակնկալել մէկը որ տալու պատգամ մ'ունի: Ահա բայց բեմ մը փափաքողին համար:

Մեր աչքերը դէպ ի յառաջ ուղղենք քաջալերուելով և խրատուելով անցեալէն: Ինչո՞ւ մեր թերթը, Միութեան իբր պաշտօնաթերթը, հաստատուն և տեւական տնտեսական նկնուկ մը չունենայ: Եթէ թերթը Միութեան պէտք է, և կը խորհինք թէ պէտք է, ինչո՞ւ մեր ժողովուրդը անոր զօրավիզ չըլլայ: Պէտք ենք զայն գնահատել և իր մատուցանելիք ծառայութիւնը նկատի առնելով պէտք ենք անոր համեմատ իր գոյութիւնը հաստատ հիմի վրայ գնել:

Միութեան իբր պաշտօնաթերթը «Նոր Աւետարեք»-ը ընելիք եթէ գործ մը ունի, պէտք է որ ան ամէնուն ձեռքը և ամէն տուն գտնուի: Անցեալ տարի Միութեան համաժողովին մէջ գոնէ մասամբ որոշուեցաւ որ այսպէս ըլլայ, բայց պէտք է որ անոր իրազօրծումը կատարեալ ըլլայ: Եթէ ամէն հովիւ կամ քարոզիչ ասիկա ընդունի, ժողո-

վորդին ուշադրութիւնը կրնայ հրաւիրել ամէն նոր հասնող թիւին յօդուածներուն, և կրնայ յանձնարարելիք ուրիշ կէտեր գտնել որ թերթը ամէն տան մէջ գտնուի:

«Նոր Աւետարեք»-ի վարչութիւնը պատրաստ է պայմաններ առաջարկել որ թերթը ամէն տան մէջ գտնուի, և ամէն հովիւէն և քարոզիչէն թղթակցութիւն կ'ակնկալէ:

Կը մաղթենք որ թերթին սիւնակները աւելի ազատօրէն օգտագործուին եկեղեցիներու և քարոզիչներու կողմէն: Ուէ մէկը թող իրեք չքաշուի թերթին նամակ մը գրելէ, գաղափար մը յայտնելէ, թարգմանութիւն մը ղրկելէ և հարցում մը ուղղելէ: Թերթը սեղան մ'է:

Հոգեւոր ճշմարտութիւններու մասին ամենաազդու մէկ վկայութիւնն է շատ մը մարդերուն գրիչով զանազան միջոցներով մամուլի միջոցաւ հրատարակել թէ ինչ է աւետարանական եկեղեցիներու գոյութեան պատճառը:

ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ուշագրաւ կարգ մը երեւոյթներ անմիջապէս աչքի կը զարնեն՝ երբ կը դիտենք յետպատերազմեան սա վերջին 10 տարիներու վախճանին ներկայացող հայ կեանքը: Հայեր երկար դարեր աշխարհիս մեծ մասին հետ և նոյնիսկ իրարու հետ չեն կրցած դիւրութեամբ պէտք եղած չափով յարաբերութեան գալ Հայաստանի աշխարհազրական գիրքին պատճառաւ բնական պատուարներով շրջապատուած ըլլալուն համար: Հայ գաղութները աւելի՛ սերտօրէն, աւելի՛ մօտէն, աւելի՛ դիւրութեամբ կրցած են յարաբերութեան գալ օտար ցեղերու եւ մշակոյթներու հետ, և այս կերպով հայ կեանքին, մշակոյթին, գրականութեան և կրօնքին զարգացման մէջ կարեւոր բա-

ժին ունեցած են: Կրնան իբր օրինակ յիշուիլ Ջուղա, Կալկաթա, Թիֆլիս, Մոսկովա, Լէմպէրկ, Կ. Պոլիս, Աթէնք, Վինետիկ, Փարիզ, Նիւ Եորք, Պոսթոն, ևայլն, որոնք հին կամ նոր ժամանակներու մէջ քաղաքական, տնտեսական, արուեստական, գիտական, կրօնական, ընկերային շատ մը նոր գաղափարներ պատուաստած են հայ կեանքին:

Իսկ այսօր Հայաստան, բացի Երեւանէն, բոլորովին պարպուած է իր բնիկներէն, և Հայերու մեծ մասը հաստատուած է Արեւմտեան ազգերու կամ անոնց ազգեցութեան ենթակայ երկիրներու մէջ: Այս կերպով Հայերս ազգովին մեղի նոր կեանքերու և մշակոյթներու ուղղակի ազդեցութեան ենթարկուած

ենք: Ասոր արդիւնքը ըլլալով մեր կեանքին մէջ մեծ փոփոխութիւններ տեղի ունեցած են և կ'ունենան:

Ապրելակերպի մասին մեր նաշալը փոխուած է: Ընկերային յարաբերութիւններու, ուտեստի և հագուստի, տուներու կահաւորման եւայլնի մասին մեր նախկին պարզութիւնը ձգելով աւելի բարդ և փայլուն կերպերը ընդգրկած ենք: Մեր ճաշակը չափով մը նրբացած է, և տակաւին այս մասին սրբապրելի շատ կէտեր ունինք: Եւ սակայն արտաքին տեսքէն և փայլունութենէն խաբուելով մակերեսային և ցուցամու ըլլալու վտանգին մէջ կը գտնուինք:

Մեր մտայնութեան մեջ հիմնական փոփոխութիւն մը երեւան գալու վրայ է: Գաղթականի կեանքը, նոր տուն տեղ չի՛նելու և առօրեայ ապրուստի հարցերը, և սա պարագան թէ այն ժողովուրդներուն, որոնց մէջ կը գտնուինք, կեանքին մէջ միայն դրամասիրութիւն կը տեսնենք, մեր մէջ սա գաղափարը յառաջ կը բերեն թէ կեանքի մէջ էական բանը նիւթականն է, հարստութիւն գիգել և վայելիլ է: Երթալով կ'աւելնան մարդերու, իրողութիւններու, հաստատութիւններու արժէքը այս նիւթապաշտական չափանիշով գնահատելու վտանգը և բարձր գաղափարականները երեւակայական նկատելու միտումը: Ընդունելով հանդերձ նիւթական բաներու արժէքը պէտք է խորհինք թէ անոնք ամէն բան, ո՛չ ալ մեծագոյն բանը չեն: Պէտք է պահենք մեր յարգանքը կրօնական ճշմարտութիւններու, բարոյական բարձր սկզբունքներու և ընտանիական սրբութեան հանդէպ:

Նոր երիտասարդութիւն մը: Անոնք՝ որ իբր փոքրիկ մանուկներ իրենց նոր հայրենիքը եկած են՝ այսօրուան երիտասարդութիւնը կը կազմեն: Անոնք շատ քիչ կը մտաբերեն կամ երբեք չեն գիտեր իրենց նախկին միջավայրը, հայ-

րենիքը, այդ տեղի ապրելակերպը, որոնց մասին հազիւ գաղափար մը կըրնան ունենալ իրենց ընտանիքներուն մէջ զանոնք յիշեցնող մնացորդներէն: Ասոնք, 15-25 տարեկան եղողներ, բառին կատարեալ առումով նախապատեւրագման սերունդէն տարբեր և նոր սերունդ մը կը կազմեն: Անոնց սովորութիւնները, մտածումները, ճաշակն ու գաղափարականները, լեզուն և վարուելակերպերը մեծապէս կը տարբերին չափահաս սերունդի ունեցածներէն: Պէտք չէ ասիկա անտեսենք անոնց զըժուաւարութիւնները, հարցերը, կեանքերը կարենալ հասկնալու և անոնց կարենալ օգնելու համար: Հետեւեալ, փոխանակ զանոնք խիստ լեզուով քննադատելու պէտք է անոնց զգացնենք թէ կարեկից հոգիով և ուժեղ ձեռքով իրենց օգնելու պատրաստ ենք: Ներկայ չափահաս դասակարգին մեծագոյն մէկ գործն է այս նոր սերունդին փոխանցել իր ունեցած ազնիւ գաղափարականները, անցեալի տեւական արժէք ունեցող հոգեւոր և բարոյական ժառանգը, և զանոնք կարողութեամբ օժտել այս ժառանգը օգտագործելու ու ճոխացնելու: Ներկայ սերունդը մեծապէս պատասխանատու պիտի մնայ ապագային համար եթէ չկարենայ իր այս պարտականութիւնը կատարել:

Մեր մտայնական կեանքը: Թէպէտ գաղթականի կեանքի կարգ մը ցըցուն հետքերը տակաւին կը պահենք, սակայն պէտք է շնորհակալ սրտով մը յիշիլ սա վերջին մէկ երկու տարիներու միջոցին յառաջ եկած՝ ըլլայ չնչին՝ մէկ բարեփոխումը: Գաղթականներու մեծամասնութիւնը տակաւին կ'ապրին հիւզաւաններու մէջ, բայց գոհութեամբ գիտելի է որ շատ մը ընտանիքներ այս կամ այն կերպով սեպական տուներու տէր եղած են: Ուրախացուցիչ է տեսնել նաեւ թէ նորեկ Հայեր, թէպէտ շատ փոքրաթիւ,

կրցած են համեստ հարստութիւն մ'ալ դիզել: Մնացեալ բացարձակ մեծամասնութիւնը թէպէտ տակաւին կը մնայ աղքատ, բայց զոնէ չոր հաց մը ուտելու չափ կրցած են տնտեսական անկախ կեանք մ'ունենալ: Թերեւս այս պարագան չենք կրնար ամէն տեղի համար ընդհանրացնել: Անտիոքի Հայ գիւղերուն մէջ ժողովուրդին մէկ մեծ տոկոսը կեանքի անհրաժեշտութիւններէն զերկուած են:

Կրթութիւն: Մեր նախնական դպրոցներուն և անոնց յաճախող աշակերտութեան թիւը, ինչպէս նաեւ օտար կրթավայրեր գացող Հայերու թիւը ըզգալի կերպով աւելցած են: Բայց կրթութեան արժէքը անոր դրամ չինելու կարողութենէն չափելու վտանգն ալ յայտնի կերպով զօրացած է: Կրթութեան մէջ գործնական մասին կարեւորութիւնը ընդունելով հանդերձ, պէտք է մտնանք որ կրթութեան նպատակը ատկէ աւելի բարձր բան մ'է: Մարդ պէտք է կրթուի ոչ իբր մեքենայ մը, այլ իբր անձնաւորութիւն մը:

Հայ Առաք եկեղեցին: Հայ Առաք. եկեղեցին յառաջդիմական քայլեր առած է աս վերջին մի քանի տարիներու միջոցին: Նոր և գեղակերտ եկեղեցական շէնքերու կառուցումը, նորընծայ քահանաներով անհովիւ ժողովուրդներուն

կրօնական պէտքերը գոհացնել, ուսեալ նոր վարդապետներ հասցնել, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպումը, Բիլիֆի օժանդակութեամբ և վհկ. Սահակ Կաթողիկոսի իմաստութեամբ Աթոռի Անթիլիասի մէջ հաստատուելը և հոն ընծայարանի մը բացուելը ուշագրաւ կէտեր են: Հայ Առաք. եկեղեցին երկարատեւ շրջափակ պարիսպի մը մէջ ապրած և ուրիշ եկեղեցիներու հետ շատ քիչ յարաբերութիւն ունեցած է: Հիմա այս պարիսպէն դուրս ելլելով սկսած է Եպիսկոպոսական—Անկիլիկան եկեղեցիին հետ ուղղակի և անուղղակի յարաբերութիւն մշակել, մասնակցած է Լոզանի և Լամպէթի ժողովներուն մէջ միջազգային կրօն—եկեղեցական հաւաքոյթներուն, ընդունած է Ամերիկեան միսիոնարութեան և Բիլիֆի գործակցութիւնը, և մանաւանդ Կ. Դպրոցի դրութիւնը պաշտօնապէս ընդունած է և իրականացուցած է, և այս կերպով բոլոր Բող. եկեղեցիները ներկայացնող Միջազգային Կ. Դպրոցի Միութեան անդամակցած է: Ներկայիս մեծագոյն հարցն է էջմիածնի Կաթողիկոսին ընտրութիւնը և եկեղեցական բարեկարգութիւնը, որուն մասին կատարուելիք ժողովը յուսալի է որ տեղի ունենայ յառաջիկայ զարուսը:

(Շարունակելի)

ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ՏՈՔԹ. Ա. ԱՆԹՈՆԵԱՆ

Քէլի Նաք (Kely Nack) ունակութիւնը սապէս կը սահմանէ. «Ունակութիւն կը կոչուի արարք մը երբ այն այնչափ յաճախ կը կրկնուի, որ առաջին անգամ յառաջ բերող պայմանը նորէն երեւան գալուն պէս առանց գիտակից կամ կամաւոր ջանքի դարձեալ կը կրկնուի»:

Կրթութեան հիմնական նպատակը

բարի ունակութիւններու կազմութիւնն է: Ունակութիւնը բնածինն է, այլ անիկա պէտք է ուրիշ ուէ ուսումի նման ստացուի կրթութեան միջոցաւ:

Ունակութիւն կազմելու ժամանակն է այն շրջանը որ ծնունդի և պատանեկութեան միջև կ'իյնայ: Տարբեր ունակութիւններ ֆիզիքական, հոգեկան, բարոյական զարգացումի տարբեր շրջաններուն հետ համապատասխան յարակցութիւն մ'ունին:

Երբ մանուկը պատանեկութեան շըրջանէն վերջը չափահաս մարդ մը կ'ըլլայ, բարի ունակութիւններ—ինչպէս պարկերտութիւն, ինքնագոյութիւն, մարդասիրութիւն, մարդասիրութիւն, վայելչասիրութիւն, մաքրասիրութիւն,

ճշգրտագոյնութիւն, ջանասիրութիւն, և այլն—երկրաւոր շրջաններէն բնութիւնը եղած պէտք է ըլլան: Ծնողներ, ուսուցիչներ, եկեղեցիներ մեծ պատասխանատուութեան տակ կը պտնուին ապագայ ցեղին բարօրութեան համար:

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Գրեց՝ ՓՐՈՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

«Վասն զի Որդին Մարդոյ եկաւ ու կորսուածք փնտռէ ու փրկէ:»

Յիսուս ինչո՞ւ աշխարհ եկաւ: Ան չեկաւ Աստուծոյ գոյութեան և տիեզերքի զաղտնիքներու մասին կարգ մը վարդապետութիւններ տալու: Աւետարաններու մէջ մենք այսպիսի բան մը չենք տեսներ: Յիսուս նաեւ չվրադեցաւ օրէնքի մէկ համարը, մէկ բառը, այս կամ այն կերպով մեկնելու: Ասիկայ Հրեայ բարբիներու գործն էր: Թալմուտ գիրքը այս հարցերով լեցուն է: Յիսուս բոլոր օրէնքը երկու խօսքերու մէջ ամփոփելով գործը վերջացուց: Սիրէ՛ զԱստուած և սիրէ՛ ընկերը: Յիսուսի նպատակը իր գալուստի մէջ ասոնցմէ տարբեր էր: Ան եկաւ կորսուածք փնտռելու և գտնելու: Շատ պարզ և յստակ նպատակ մը: Նազարէթի Սինակոկի մէջ գիրքը բացաւ ու կարդաց. «Տէրջը հոգին իմ վրաս է. ինչու որ զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս զրկեց կտորըլած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն ապատութիւն և կոյրերուն տեսութիւն քարոզելու:» Յիսուս եկաւ մարդերը փրկելու և ոչ անոնց հետաքրքրութիւնը գոհացնելու:

Բրիտանացի Եկեղեցիին գործը ահա այն է: Եկեղեցիին նպատակը չէ երգեցողութիւն ընել, աղօթել, հոյա-

կապ քարոզներ տալ, և այս կերպով անդամներուն համար հաճելի հաւաքովայն մ'ըլլալ, այլ՝ ծառայել եկեղեցիէն դուրս գտնուողներուն: Եկեղեցիին գործն է փնտռել և գտնել դուրսը գլտնուող հազարաւոր կորսուածները, խաղաղութեան աւետիսը տալ խեղճերուն և յուսաբեկներուն, լոյս և ազատութիւն քարոզել կոյրերուն և գերիներուն: Եկեղեցին փրկուածներու ժամագրովայնը չէ, որպէսզի հոն հաւաքուին զիրար վայելելու համար: Եկեղեցին բանակ մըն է, դուրս նետուող դէպ յառաջ խոյացող բանակ մըն է: Եկեղեցիին բուն գործը փնտռել և գտնել է: Եկեղեցին անշարժ լիճ մը չէ, այլ հոսող գետ մը որ կը վազէ դէպի անապատները: Եկեղեցին որոշ տեղ մը կանգնուած մարմարէ արձան մը չէ, այլ՝ խօսող մարգարէ մը:

Պօղոս Առաքեալ շատ լաւ հասկցած էր Յիսուսի մէջ եղող այս հոգին: Պօղոս, որ թունդ հրեայ մըն էր, դուրս ելաւ իր շրջանակէն և իր ազգէն, և ինքզինքը նետեց հեթանոս աշխարհը, Սելանիկ, Աթէնք, Հռոմ: Անիկատեղ մը կապուած չմնաց, և ամէն մարդուն իրեն գալուստ չսկսուեց, ինքը անոնց գնաց: Կորսուածները փնտռելու և գտնելու համար աշխարհ նետուեցաւ: Մինչ այդ ատենուան քրիստոնեաներէն և առաքեալներէն շատեր իրենց ազգա-

յին շրջանակին մէջ բանտուած մնացին և թշվառութեան ու անթշվառութեան, շաբաթի և մկրտութեան, պիղծի և անպիղծի, միս ուտելու և չուտելու նման հարցերով իրենց ոյժն ու ժամանակը կը սպառէին, Պօղոս մէկ կողմ նետեց այս նեղմտութիւնը և քրիստոսի լայնամտութեամբը ամէնուն, ամէն տեղ և միշտ քարոզեց Աւետարանը:

Այսօր որքա՛ն պէտք ունինք այս հոգին հասկնալու: Մեր եկեղեցական բեմերէն կը լսենք, կ'առնենք, կը վայելենք գեղեցիկ քարոզները, սակայն զընթէ չենք խորհիր ուրիշներու հանդէպ եղած մեր պարտականութեան մասին: Մեր փրկուած ըլլալուն մասին ցնծութեան երգեր կ'երգենք, սակայն դուրսը Աստուծոյ խօսքէն հեռու եւ անոր անտեղեկով բերաւորներու վիճակը մեզ երբեք չի տանջիր: Մենք կ'ուրախանանք և կը հպարտանանք հաւատացեալներու խումբին պատկանած ըլլալնուս համար, սակայն երբեք հոգ իսկ չենք ընել դուրսը մեզքի մէջ թաղուած, անբարոյութեան, զինեմտութեան, խարդախութեան և խաբեբայութեան մէջ ապրող մեծ բազմութիւնը: Մենք գլուխ գլխու տուած սիրով և խաղաղութեամբ կ'ապրինք մեր շրջանակին մէջ, սակայն մեր միտքն իսկ չենք բերեր մեր քաղաքին մէջ հակառակութեան եւ ա-

տելութեան կրակով տոչորող եւ իրարու արեան ծարաւող զանգուածներու, ցեղերու եւ ազգերու վիճակը: Եթէ երբեք ամիսը անգամ մը անոնց համար ազօթենք, առաքինութիւն մը ցուցուցած ըլլալ կ'զգանք գրեթէ:

Որդին Մարգոյ եկաւ կորսուածը փնտռելու և գտնելու: Մենք մեզի հարցնենք թէ այս տարի քանի՞ կորուսեալ փնտռելու ձեռնարկեցինք, թէ մեր ազդեցութիւնն ու ծառայութիւնը մեր շրջանակէն, հաւաքոյթէն, եկեղեցիէն և ազգէն որչա՞փ դուրս եկան: Թիրևս Պօղոսի նման ծովերէ չանցանք, բայց արդեօք մեր տունէն և խանութէն՝ մեր զրացիին, մեր թաղէն՝ ուրիշ թաղ մը, մեր եկեղեցիէն ուրիշ եկեղեցի մը, մեր ազգէն ուրիշ ազգի մը գացի՞նք: Իբր անհատ, իբր հաւատացեալներ, և իբր եկեղեցի ասիկայ խորհեցա՞նք: Ասոր միջոցները քննեցի՞նք: Ասոր համար ազօթեցի՞նք: Գիտնանք որ քրիստոնեայ եկեղեցիի մը եւ քրիստոնեայ եղբայրներու աստիճանը ասօժ կ'որոշուի:

Մեր ձաւոր Արեւելքի Աւետարանական եկեղեցիներու պատմութեան մէջ նոր էջ մը պիտի բացուի, երբ մեր եկեղեցիները իրենք իրենցմէ դուրս ելլելով իբր գլխաւոր նպատակ ընտրեն կորսուածը փնտռել:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ ԱՒԵԼԻ ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՆՔ

Գրեց՝ ՓՐՈՅ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ» ի յարգելի խմբագիրը մեզի հարցուցած էր թէ նոր տարուան համար ըսելիք մ'ունի՞նք: Պատասխանս սա է. այս նոր տարուան միջոցին աւելի անկեղծ ըլլանք, մանաւանդ մեր երիտասարդներուն հանդէպ: Ներկայիս աշխարհի մեծագոյն մէկ

թերութիւնը անկեղծութեան եւ պարզութեան պակասութիւնն է: Զեւապաշտութիւնը, կեղծիքն ու ցուցամոլութիւնը մեր ընկերային, կրօնական և ազգային կիանքը կը խեղդեն և թոյլ չեն տար որ ան մեծնայ: Դիւրին չէ որոշել թէ աշխարհի մէջ ճշմարտութիւնը յայտնելու

թէ զայն ծածկելու համար ջանքը աւելի զօրաւոր է: Կեղծ քաղաքավարութիւն, կեղծ սէր, կեղծ գեղեցկութիւն, կեղծ առաքինութիւն, կեղծ կրօնասիրութիւն, կեղծ գիտութիւն այնքա՛ն շատցան որ շատ դժուար կ'ըլլայ անոնց մէջէն զանազանիւ ճշմարիտ սէրը, ճշմարիտ կրօնասիրութիւնն ու գեղեցկութիւնը, և այլն: Զարմանալի չէ որ կարգ մը յոռտոտներ կը յանգին սա սխալ եզրակացութեան թէ կեանքի մէջ իրական և կեղծիքէ գերծ բան մը չկայ, և ամէն ինչ շինծու և սուտ է: Բայց իրողութիւնը սա է որ ցորենն ու որոմը աշխարհի մէջ միշտ միատեղ կը գտնուին, և թէպէտ անոնք իրարու շատ կը նմանին, սակայն էապէս իրարմէ կը տարբերին, և ուշ կամ կանուխ իրարմէ պիտի գատուին և իրական ցորենը երեւան պիտի գայ:

Սա երկիրը, այն պայմաններն ու ընդհանուր միջավայրը որոնց մէջ կ'ապրինք, զօրաւոր կերպով մեզ կը մղեն դէպ ի ձեւականութիւն բուրոգ կեանք մը, որմէ անգիտակցաբար յափշտակուելու վտանգին մէջ կը գտնուինք: Պէտք է որ այս վտանգին, այս փորձութեան դէմ արթուն կենանք: Հետեւաբար պէտք է որ աւելի՛ պարզ, աւելի՛ անկեղծ, աւելի՛ ճշմարտասէր ըլլանք իբր ծնողք ընտանեկան կեանքի մէջ, իբր ուսուցիչ դպրոցի մէջ, իբր եկեղեցական և հովիւ կրօնական կեանքի մէջ, իբր հրապարակագիր և առաջնորդ ազգային կեանքի մէջ:

Մեր երիտասարդներն ու երիտասարդուհիները (13—18 տարեկան), մանաւանդ քիչ թէ շատ ուսեալ եղողները, ամէնէն աւելի զգայուն են մակերեսային և կեղծ կեանքի հանդէպ: Երիտասարդութեան ամենագլխաւոր յատկանիշն է թափանցկութիւն, անկեղծութիւն և ճշմարտասիրութիւն: Անոնք կը ծաղրեն և կ'արհամարհեն ինչ որ ուրուեստակ-

եալ, կեղծ և շինծու է: Մենք յաճախ այս կէտը կը մոռնանք երիտասարդներու հետ մեր ունեցած յարաբերութեանց մէջ: Իրաւացի կամ անիրաւ կերպով— և կարծեմ յաճախ անիրաւ կերպով— մեր երիտասարդներուն դէմ կ'ըսենք. «Որդիս ընտանիքին մէջ ա՛լ կ'ըմբոստանայ դուստրս ալ իր մօրը դէմ կը խօսի: Իկեղեցիի և հոգեւոր պաշտօններու հանդէպ նախկին տաք վերաբերումը չունին, և իրենց դպրոցին ուսուցիչներուն մասին ալ անոնց գանգատները կը շատնան»: Լիսպիսի խօսքեր շատ անգամ կը լսինք: Երիտասարդներուն ցուցուցած այս մըտայնութիւնը կրնայ զանազան պատճառներ ունենալ, բայց կը խորհինք որ անոր է՛ն կարեւոր մէկ պատճառն է սա պարագան՝ թէ անոնք տունը, դպրոցը, եկեղեցիին և ընկերային կեանքին մէջ փոխանակ բաւականաչափ ճշմարտասիրութիւն և անկեղծութիւն տեսնելու, յաճախ կը գտնեն որ արուեստական և ձեւապաշտ քաղաքակրթութեան մը հոգին կ'իշխէ:

Իբր օրինակ առնենք ընտանեկան կեանքը: Ընտանիքը սուրբ նպատակ մ'է: Ծնողի և զաւակի յարաբերութիւնը մտերմիկ է: Ինչպէս որ ծնողները իրենց զաւակներէն հնազանդութիւն և յարգանք կ'ակնկալեն, այնպէս ալ զաւակները իրենց ծնողներէն համակրութիւն, սէր և անկեղծութիւն կ'ակնկալեն: Անոնք կ'ակնկալեն որ ծնողները զիրենք ա՛լ մարդօւ տեղ զնեն, պէտք եղած առիթները հետ մտերմաբար խորհրդակցին, իրենց հանդէպ ունէ պաշտօնականութիւն չցուցնեն, հայր և որդի իրարու հետ աղերսազրոյ չխօսակցին: Զաւակները կ'ուզեն որ ծնողներու կեանքն ու խօսքը իրարու համաձայնին. անոնք կ'ակնկալեն որ իրենց ծնողքը ընդհանուրին հանդէպ անկեղծ ըլլան: Զարմանալի է որ, այս վիճակը իր ընտանիքին մէջ չտեսնող երիտասարդ մը

իր ծնողներուն հանդէպ պէտք եղած յարգանքն ու հնազանդութիւնը չի կրնար ցուցնել:

Ուսանող մը դպրոց կը մտնէ նախ և առաջ ճշմարտութիւնը սորվելու համար, լեզուական, հաշուական, գիտական, գեղարուեստական, ընկերային, պատմական, տնտեսագիտական, կրօնական մարզերուն մէջ իրականութիւնն ու ճշմարտութիւնը ուսանելու համար: Գլխաւոր նպատակը այս է: Ուսանողը երբ կը տեսնէ որ ուսուցիչը իրողութիւնները երբեմն մասամբ կը խօսի, երբեմն բոլորովին կը ծածկէ, երբեմն կը խօսի այնպիսի կէտեր ուրոնք գիտէ թէ սխալ են, երբեմն փոխանակ պատասխանելու կը լռէ, և ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը կը գոհէ անձնական, ընկերային կամ ազգային բաղձանքներու, այն ատեն անիկա կը պահէ՞ իր սուսը՝ չին հանդէպ իր նախկին վստահութիւնը և դպրոցին հանդէպ իր նախկին սէրը: Շատ սուր տեսողութիւն ունին աշակերտները, որոնց հանդէպ արդարամիտ և անկողմնակալ չեղող, և խօսքն ու գործքը իրարու չհամաձայնող ուսուցիչ կամ տեսուչ մը շատ շուտ կը կորսնցընէ ասոնց վստահութիւնն ու յարգանքը: Ուսանողը թափանցիկ և անկեղծ ուսուցիչ կ'ուզէ:

Անկեղծութիւնը ամէնէն աւելի պէտք է կրօնական գործերուն մէջ: Կեղծաւորութեան և ձեւապաշտութեան համար մեծագոյն փորձութիւնն ալ այս մարզին մէջ կը գտնուի: Այսօր շատ կը գանգատին թէ մեր երիտասարդները եկեղեցիէն կ'ուժանան, թէ կեանքի շատ կարեւորութիւն չեն տար, թէ օրէ օր քրիստոնէութենէ կը հեռանան: Դժբախտաբար այս գանգատը շատ ճշմարտութիւն կը պարունակէ: Բայց ո՞վ է ասոր պատասխանատուն: Արդեօք բոլոր ճշմարտութիւնը կ'արտայայտէ՞ ըսել թէ մեր երիտասարդները կրօնքէն կը պաղին, արդի պահանջին և միջավայրին ազդեցութեամբ: Զարմանալի է եթէ մեր խորհող և զգայուն երիտասարդները ե-

կեղեցիին և կրօնքին հանդէպ քիչ մը պակասեցին, երբ անոնք կը տեսնեն որ եկեղեցականը կամ քարոզիչը փոխանակ «Նախ Աստուծոյ թաղաւորութիւնը» փոխառելու յաճախ չահն ու հանգիստը կը խորհի, երբ կը տեսնեն որ քարոզիչը յաճախ իր քարոզին չի հաստատար, իբր սովորութիւն և թուրակութէն խօսածին իմաստը ինքը չի հասկընար, երբ կը տեսնեն որ կրօնականին կամ հոգեւոր ուսուցիչներուն կեանքը իրենց ուսուցիչներուն չի համաձայնիր, և հպարտութիւնը, ինքնահաւանութիւնը, վրէժխնդրութիւնը, չահաւիրութիւնը կարեւոր տեղ կը գրաւեն բարեպաշտ նկատուած շատ մը եկեղեցիի առաջնորդներուն կեանքին մէջ, երբ կը տեսնեն որ աղօթքները փոխանակ սրբաւոր բղխելու երբեմն թուրակօրէն սիրվուած բառերով կը կրկնուին, այս, երբ անոնք կը տեսնեն որ պաշտօնական քրիստոնեաներ յաճախ այնքան զբաղած են «անանուխի և սամիթի տասանորդովը» որ ժամանակ չունին պարապելու հազարապատիկ աւելի կարեւոր եղող հոգեւոր կեանքի, ապաշխարութեան, փրկութեան, հաւատքի, ներդաժտութեան, ծառայութեան ու գոհութեան կեանքի նման հարցերով:

Այո՛, կ'ընդունինք որ ընկերային կեանքի մէջ տեսակ մը պաշտօնակաւութիւն պէտք է: Մարդիկ տակաւին պատրաստ չեն ամէն պարագային ստիճանի ճշմարտութիւնը տեսնելու և լսելու: Սինայէն վար իջնող Մովսէսին դէմքը պէտք է քողարկել: Երբ պաշտօնականութիւնը, սակայն, ճշմարտութիւնը ծածկելու կը ծառայէ, կեղծիքի և խաբեբայութեան կ'առաջնորդէ, ըստորին փափաքները վարպտութեան կ'օգնէ, այն ատեն մեծագոյն ազդեցող դառնայ: 1931ի համար մեր յանձնարարութիւնը կրկնենք: Աշխատի՛նք ամէնուն, մանաւանդ երիտասարդաց հետ մեր յարաբերութեանց մէջ աւելի անկեղծ, աւելի՛ պարզ ըլլալու, հեղեղով մեր Մեծ Վարդապետին:

ԶՈՐՍ ՏՈՐՐԵՐ ՏԻՊԷ ՀՍԿԱՅ ԲԱՐՈՋԻՉՆԵՐ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

Ամերիկա հարուստ երկիր մըն է կրօնական մարզին մէջ ալ: Սակայն չկարծուի թէ հոս աղքատներ ու անօթի մեռնողներ չկան: Միայնակ նահանգացի մէջ 212 յարանուանութեանց կէսէն աւելին հազիւ 1000-2000 անգամներ ունի: Միայն 25-30ը 200,000 էն աւելի անգամներ ունին: Ամերիկայի 232000 եկեղեցիները 44,380,000 անգամներ էւ 21 միլիոն կիրականօրեայ Դպրոցի աշակերտներ ունին: Այս թիւը ոչ յարանուանական և կաթոլիկ եկեղեցիներուն տոմարը արձանագրուողներով միատեղ 70 միլիոնէ աւելի կ'ըլլայ: Աւանց ունէ եկեղեցիի մը արձանագրուելու եկեղեցի գացողներն ալ եթէ տասը միլիոն սեպենք՝ ընդհանուր գումարը 80 միլիոնի կը հասնի: Այս պատկառելի թիւ մըն է, սա կը նշանակէ որ հոս կրօնի կարեւորութիւնը մեծ է: Բոլոր եկեղեցիներուն ծախսած դրամը՝ բոլոր հանրային դպրոցներուն ծախսածէն 3,000,000 աւելի է: Ըսել է կրօնքը կ'ապրի:

Հոս քարոզիչներու հսկաներուն ալ չատ կը հանդիպինք, ինչպէս որ հիմա նորութիւն մըն է 60-70-100, և աւելի յարկերով զիրար գերազանցող «Երկինքը քերող» (sky scraping) վիթխարի բարձր շէնքեր շինել:

Այս յոգուածով նպատակս է «Նոր Աւետարներ»ի յարգոյ ընթերցողներուն, և մանաւանդ սիրելի քարոզիչ ընկերներու աշատեղի հսկայ քարոզիչներէն տարբեր տիպէ չորս հատին վրայ քիչ մը տեղեկութիւն տալ:

ՎԵՐ. ՏՐ. ՔԷՄՊԸԼ ՄՕՐԿԸՆ

Լոնտոնի մեծահամբաւ այս մարդը այժմ Ամերիկա խլած է: Իր աշխարհածանօթ գիրքերը մանկութենէս ի վեր գիտեմ:

Տր. Մօրկըն անձնապէս՝ պարզ, խոնարհ, պատկառելի, երկայնահասակ, նիհար, ջղային, խորհուրդաւոր, հոգեւորական տարագով, Երիցական եկեղեցիի մէկ զաւակն է: Սակայն իր գործի դաշտը ոչ յարանուանական և համաշխարհային է:

Այս ւնայրը ճիշդաւր ֆարգիչ լըն է. Ամերիկացիք զիտեն անոր արժէքը: Նաև զիտեն անկէ օգտուիլ, զայն գործածել, կամ գործել տալ:

Քարոզի ասեմ շարժումները՝ չափաւոր, սուր և ազդեցիկ են. երբեմն անպէտ ջղային շարժումներ ալ ունի, ձեռքը՝ բերանը, երեսը կամ գլուխը տանելով, մեր Անաթոլիա Գոլէճի նախագահին Տր. Թլէյսիի նման: Զայնը՝ հասկնալի, յըստակ, ոչ-արագախօս 70 տարեկան ծերունիի ձայնն է. իր անունով զինքը 80 ըլլալ կը կարծէինք, սակայն երեսոյթով հազիւ 60 կ'երևնայ: ԽՕՄՔԵՐԸ՝ կշռուած, յղկուած չափաւորուած, իր տեղին համար կանուխէկ պատրաստուած են զոր հանդարտաբարոյ, հեղինակաւոր կերպով առանց ճիգի ու ջանքի կ'արտասանէ: ԲԱՌԵՐԸ՝ ճիշդ իր միտքը ու նպատակը յայտնող զիտական բառեր են. նախագասութիւններ իրարու ետեւէն, զիրար պարզող, բացատրող, վերլուծող ու վերաշինող հանգամանք ունին. յունական ու եւրոպական բառեր նոյն արագութեամբ ու սահունութեամբ բերնէն կը վազեն: Դադարաւորները՝ միշտ զիտական, փիլիսոփայական, աստուածաբանական, իմաստասիրական... խորունկ են, որոնք երթալով աստիճաններով վարերը կը պտտացնէ քեզ և երբեմն ալ վերերը էվէրէսթի գագաթը՝ աչքիդ առջեւ նոր տեսարաններ պարզելով միշտ: Մարդ կը յափըշտակուի, ինքզինք կը մոռնայ, քուն

մրափել բնա՛ւ: Միշտ քեզ կը վազցընէ իր գաղափարներուն ետեւէն, եթէ կըրնաս հասնիլ, եթէ կրնաս քիչ մը մարսելու ատեն ունենալ: Քարոզելու ձեռք աւելի փաստաբանող, վերլուծող, համոզող, երբեմն կատաղի առիւծի պէս յարձակող, մեկնաբանող, ուսուցանողէ աւելի փրօֆէսոր է: Բնաւ հակառակորդին, ենթացողի թշնամիին զէմ կծու խօսք ու հալածական բան չունի: Միայն իր նիւթը հաւնողից կ'ընէ, անառարկելի կ'ընէ. կը յաղթէ, կը պապանձեցնէ հակառակ խորհողը:

Ան կըսէ. «Ես կրօնի և Աւետարանի հակառակողները բնաւ նկատի չեմ առներ, բնաւ անոնց կարեւորութիւն չեմ տար: Միայն Ս. գիրքը կը քարոզեմ ու կը բացատրեմ. այդ գիրքը ինքզինքն իր պաշտպանէ:» Օրինակ մը ըսաւ. «Ատեն մը Սկովտիոյ մէկ ազարակին մէջ ցուլ մը կար կատաղի որ վանդակորմի մէջ կը պտըտէր. դուրսէն տղաք մօտը կուգային երբեմն քար կը նետէին... ցուլը կը բարկացնէին: Ծառան ազարակի տէրոջ գալով ըսաւ, «Ի՞նչ ընենք, սա տղաքները... նեղու, թիւն կուտան ցուլին:» Ազարակատէրը ծառային հրամայեց որ ցուլը արձակէ երբ տղաք կրկին կուգան ու նեղութիւն կուտան, «դուռը բաց ու գայն դուրս գիր, ցուլը ինքզինքը կրնայ պաշտպանել:» Նմանապէս իմ Ս. Գիրքս ալ ինքզինքը կը պաշտպանէ, միայն ես դայն կ'արձակեմ, կը քարոզեմ:»

Քարոզը խօսելու ասեմ քուդրի չի նայիր: Լաւ սերտած, պատրաստուած, լեցուն եկած է: Կակազիլու, բառ մը կամ խորհուրդ մը ու կապակցութիւնը միտք բերելու բնաւ չի կենար, չի խորհիր: Յորդահոս աղբիւր մըն է ան: Իր յաջողութեան մեծ գաղտնիքը հոս է: Լաւ պատրաստուած անկիտն կ'եղի: Կեանքի պատրաստութիւնը լաւ է, խորունկ ու լեցուն է. մեծ տաղանդ մ'է: Իր մեկ քարոզին պարունակութիւնը՝ կ'ըսեն թէ, սովորական

քարոզիչի մը 13 քարոզներուն պարունակածին չափ նիւթ ունի: Կամ անոր մէկ քարոզը մօտիկ ընելով 13 հասարակ քարոզներ լսածիդ չափ բան կը սորվիս:

Աշխարհիս՝ Սբ. Գիրք գիտցող ու բացատրող է՛ն մեծ քարոզիչն է կ'ըսեն: Միշտ տեղէ տեղ կը հրաւիրուի. պէտք է ուրիշներն ալ վայելեն:

Այս մարդը ամառուան տաքին և ձմռան ցուրտին Ամերիկայի քաղաքը կամ վայրը որ քարոզէ միշտ սրահը ընտրեալ դասակարգի մարդոց մօլ լեփուցուն կ'ըլլայ երբեմն ժամանակէն ժամբար առաջ երթալու ես որ ուզած տեղդ նստելու նըստարան գտնես: Ասոր ունկնդիրներն են քարոզիչներ, ուսուցիչներ, փրօֆէսորներ և այլ ուսեալ դասակարգը: Սոսկական մահկանացուներ զայն չեն կրնար հասկնալ: Քարոզիչներու քարոզիչն է ան:

Այս ամառուան երկու ամիսներու միջոցին իր վազանցային, վեց տարբեր նահանգներու պայլըլ գոնֆէրանսներու ընտրեալ դասակարգին, ամէն օր պիտի դասախօսէր, օրը մէկ երկու անգամ: Ան կ'ըսէր. «Գործը՝ ինծի վազանցի հաճոյքը կուտայ»: Իր Ֆիլատէլֆիա գալէն ի վեր, չոր եկեղեցի մը ժողովուրդով լեցուեցաւ:

Իր չորս տղաքներն ալ քարոզիչներ եղած են: Սա ալ իրեն յարգանք է: Յիրաւի բարեբախտութիւն մը ու մեծ վայելք մըն է այս հսկայ քարոզիչին մը տիկ ընել: Փառք Աստուծոյ՝ այսպիսի մեծ տաղանդներ Աստուծոյ նուիրուած են ու կը գործեն Աստուծոյ թաղաւորութեան համար: (Շարունակելի)

Հակասական բան մ'է մէկը կոչել մարդասպան՝ երբ ան իր կողմը գտնուող մէկը կ'սպաննէ, իսկ հերոս՝ երբ ան միւս կողմը գտնուող մէկը կը մեռցնէ:

ՓՍՍՔԱԼ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԵՌԵՐԸ

Գրեց՝ ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ամէն անգամ որ ազգասիրութեան խօսքը կ'ըլլայ՝ գրեթէ սովորութիւն դարձած է մեր մէջ հարցնել՝ թէ ի՞նչ է ազգասիրութիւնը, և պատասխանել՝ թէ Ազգասիրութիւնն է իր ազգը սիրել, բարձրագոյն իմաստով: Ասիկա այնքան յաճախակի կրկնուած է, որ ալեւս հասարակ տեղիք դարձած է: Ինչ որ լուսաբանութեան կը կարօտի մեր մէջ այսօր, ազգասիրութեան արտայայտութեան ձեւերուն կը վերաբերի յաւելաքան անոր իսկութեան:

Խոշոր հատուած մը կայ մեր ազգին մէջը, որուն համար «ազգասիրութիւն» բառը ուրիշ իմաստ չունի բացի անոր քաղաքական իմաստէն: Անոնք կը խորհին միայն ազգին այն ցաւերուն և կարիքներուն վրայօք՝ որոնք մեր քաղաքական դժբախտութիւններէն ծնունդ առած են: Ուստի, ըստ իրենց ազգասիրութիւն կը նշանակէ միայն լծուիլ, այն դժբախտութեանց բարձումին ունէ կերպով, պաշտպանուիլ՝ թըշնամւոյն զէմ զէնքի ուժով, ազգին վըրէժը երգել, և կազմակերպուիլ ազատ և անկախ հայրենիքի հեռանկարին համար: Ազգասիրութեան այս սեռը կը բնորոշուի հրացաններով, փամփուշտներով ու ռումբերով. անիկա կը պանծայ կուսակցական շարքերով, և ընդհանրապէս կը մերժէ իւր ազգասէր, և երբեմն ալ իւր հայ ընդունիլ ունէ անհատ ոչ կուսակցական շարքերէ, կամ իր կուսակցութեան շարքերէն դուրս կը մնայ:

Մենք կը գնահատենք քաղաքական արժէքներն ու իրականութիւնները: Յիրաւի մեր ազգին ամէնէն էական պէտքերէն ոմանք քաղաքական պատմաճանոթ կը ներկայանան մեզի: Պէտք է, և արդար է, ինքնապաշտպանութիւն

նր ի հարկին: Պէտք է խորհիլ և գործադրել այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ազգին ապագան քաղաքականապէս ամուր հիմերու վրայ դնելու և անոր խաղաղութիւնը ապահովելու համար ամէն իրական ծառայութիւն այդ ազգութեամբ ազգասիրութիւն է, և բարձրօրէն գնահատելի:

Բայց մեր ազգը միայն քաղաքական ծառայութեան չէ որ կը կարօտի: Անոր կարիքները ծովածաւալ են, և հետեւաբար անոր ծառայելու միջոցներն ալ բազմապիսի: Յիշենք անոնցմէ մի քանին:

Մեր ազգը *sénatisme* գեղնի վրայ ծառայութեան *պէսֆ ունի*: Ազգի մը տընտեսականը անոր ողնայարն է: Տնտեսապէս տկար ազգ մը անկարող է իր ոտքերուն վրայ կայնելու, անատակ՝ իր տաղանդները զարգացնելու և սեւէ հիմնաւոր ձեռնարկ ի գլուխ ածելու. անիկա դատապարտուած է զրկանքներու մէջ ապրելու և ընդմիջտ օտարներէն ուղորմութիւն մուրալու: Մեր ազգին մէկ մեծ տոկոսը սոյն արգահատելի վիճակին մէջ կը գտնուի այսօր: Քաղաքական իրադարձութիւններ ոչ միայն մեր թիւը տասանորդեցին, այլ միայնպէս մայն փճացուցին մեր տնտեսականը: Մեզմէ շատեր որ նախապէս նախանձելի գիրքերու կը տիրէին՝ այսօր չոր հացի կարօտը կը քաշեն, որոնք պատրաստ են ու իցէ գործի, եթէ բախտն ունենան ձեռք ձգելու զայն: Ազգին կարեւոր մէկ մասը դատապարտուած է տակաւին քէմփերու անբնական և վայրաքարշ կեանքը վարելու: Եթէ կ'ուզենք որ մեր ազգը փայլի, զարգանայ և յառաջդիմէ՝ անհրաժեշտ է որ անիկա ազատուի այս տխուր վիճակէն, աղքատու-

թիւնը ի բաց թօթափէ, և տնտեսապէս ինքնաբաւ և նախանձելի վիճակի մը հասնի: Այսնպատակին հասնելու համար կարեւոր է զործ հայթայթել, առաջնորդել, լուսաւորել և կազմակերպել: Ո՞վ պիտի զլանար «Ազգասէր»ի ամենափայլուն տիտղոսը ամէն անոնց որ այդ ուղղութեամբ անկեղծ ջանքեր կը թափեն:

Մեր ազգը բարոյական մարզին մէջ ծառայութեան պիտի ունի: Բարոյականը կեանքի խարիսխն է: Առանց անոր՝ կեանքը փտած է, որչափ որ ալ փայլուն ըլլան նիւթականն ու ֆիզիքականը: Մեր այդ աւագ կարօտութիւնը որ տրդէն շեշտուած էր լաւագոյն պարագայներու տակ, հազար անգամ աւելի հըրամայական դարձած է այսօր: Ամէնէն ահեղ հարուածը զոր հասցուց մեզի Մեծ Պատերազմը ոչ ֆիզիքական էր ոչ ալ տնտեսական, այլ բարոյական: Ընտանեկան սրբութիւնը, ճշմարտախօսութիւնը, պարտաճանաչութիւնը, հաւատարմութիւնը, ծառայութեան ոգին և դեռ ինչ ինչ աւաքինութիւններ ահռելի աւերներ կրեցին մեր մէջ: Գրեթէ բարոյական սնանկութեան սահմանին հասանք: Ատոր արդիւնքը չե՞ն միթէ ընտանեկան անվերջ ցաւեր և փլուզումներ, եղբայրասպան կռիւներ, մեր ու ժերը ջլատող հակառակութիւններ և անհամաձայնութիւններ, և պէս պէս ընկերական ցաւեր և կնճիռներ, որ որթերու պէս ներսէն կը կրծեն մեր ազգին կեանքը: Ո՞ր բանը աւելի ազգասիրութիւն կրնայ նկատուիլ քան դարման գտնել այս սրտածմլիկ կացութեան, խօսիլ, խրատել, օրինակ տալ մաքուր բարոյականութեան համար, ընկերութիւններ հիմնել ու կառավարել և ամէն կերպով ճգնիլ անբարոյութեան թոյնը դուրս թափել ազգին ջիւղիւնէն:

Մեր ազգը ծառայութեան պիտի ունի կրթական մարզին մէջ: Արժանաւոր կըր-

թական մշակներու գործը ամէնէն աւելի կենսական է մեր մէջ այսօր մանաւանդ, մշակներ որ անկեղծ նուիրումով գիտեն մտքին հետ միասին կրթել նաեւ սիրտն ու հոգին, առաջնորդել դէպի ճշմարիտ մարդկութեան, և այսպէս հասցնել առողջ և բազմակողմանի հայ սերունդներ: Թանկագին ազգասէրներ են անոնք:

Մեր ազգը կրօնական մարզին մէջ ծառայութեան պիտի ունի: Անկեղծ և նուիրուած հոգեւոր առաջնորդներ, եկեղեցական թէ աշխարհական, որ կը քարոզեն ինչ որ կը հաւատան, մանաւանդ ինչ որ կ'ապրին, որ կ'այրին ու կը տօնոյն հոգիներու փրկութեան կարօտով՝ ամէնէն էական ծառայութիւններէն մէկն է որ կուտան ազգին, առաջնորդելով զայն իր հոգեւոր անգին ծառայութեան: Անոնք ճշմարիտ ազգասէրներ են:

Մեր ազգը բարեգործական ծառայութեան պիտի ունի: ճշմարիտ ազգասէրներ են բոլոր անոնք՝ որ հայ սրտին և տառապեալին ցաւը իրենց սրտերուն մէջ կը կըրեն, և զիտեն լայն բանալ իրենց քրակները բառնալու համար անոնց տառապանքը:

Ճշմարիտ ազգասէրներ են բոլոր անոնք որ ազգին մէջ զիտութիւն կը տարածեն, արուեստներ կը յառաջացնեն, ընկերական եւ այլ բարեկարգութիւններ կը ներմուծեն, եւայն եւայն: Որհիւ թէ միայն ազգին քաղաքական պէտքերուն ընդառաջ զացողները ազգասէրներ են չափազանց միամտութիւն է առնուազն: Հայ մարդը միայն քաղաքական կամ ազգային կեանք կամ գոյութիւն չունի. անոր մէջ համաչափ և ներդաշնակ կեանքը ստեղծելու համար հարկ է որ անոր կենսական բոլոր պէտքերն ալ հոգացուին: Մէկ խաղով կարելի չէ եղանակ շինել. քաղցրահնչիւն եղանակ մը կերտելու համար շատ խապեր պէտք են:

Անշուշտ կարելի է, և ընդհանրապէս շատ ալ փափաքելի, որ ունէ հայու ազգասիրութիւնը արտայայտութիւն գտնէ զանազան մարզերու մէջ, ինչ որ բարեբաղդաբար կը պատահի շատ անգամ։ Բայց ատիկա առաւելապէս կախաւ է անհատին բնական միտումներէն, ձիրքերէն և կրթութիւնէն։ Ամէն մարդ տակ չէ ամէն տեսակ ծառայութեան։

Ազգասիրութեան զանազան սեռերը իրարու յրացուցիչ մասերն են, որոնք միանալով կը կիրտեն առողջ բազմակողմանի և յառաջագէտ ազգ մը, ինչպէս որ մարդկային մարմինի անդամները զանազան ծառայութիւններով և իրերօգնութեամբ կը յառաջացնեն և կը պահեն ցեղիցիկ և ներդաշնակ կիսանք մը։

ՊԱՐԶ ԽՕՍՔԵՐ, ԲԱՐՁՐ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՄԵԽԱՐԱՂԶՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ՏՈՒԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Կ'ապրինք ժամանակի մը մէջ հրա պատանի ըլլալը հպարտագոյն բանն է։ Նշանաւոր մարդիկ իրենց յաջողութիւնը կը պարտին, գոհարէն աւելի թանկագին ժամանակին։ Միծ մարդ մը ունեցածին բոլորը տալ խոստացաւ, եթէ տրուէր իրեն 50 տարի ապրելու կեանք մը միայն։

Աշխարհը քիչ դժբախտ մը պիտի դառնայ, երբ մեծնալու ըլլաւ։ Ինչ ընելու դիտաւորութիւն ունիս հոն։ Պիտի ուզե՞ս թող տալ ինքզինքդ տարուբերուելու այս կամ այն հովէն, մինչև որ մութ դռները բացուին և առաջնորդեն քեզ հանդերձեալ կեանքի մը, և կամ ոյժերդ գործածելով զգալ տաս աշխարհի մեծութիւն և օգտակարութիւնդ։ Թե՛րևս կ'ապրիս փոքրիկ քաղաքի մը մէջ և անտեղեակ ես աշխարհի մեծ մասին, բայց հաշակի և փառաց առաջնորդող իւրաքանչիւր արահետ կ'սկսի դպրոցիդ դրան սեմերէն։ Դպրոցի դրան առջեւէն քալելով կրնաս առաջնորդել ինքզինքդ արքայական կամ համբաւի ոսկեզօծ գահերուն։

Վազդդներ կ'արժանանան մրցանակին։ Ո՛չ մէկը կրնայ ետ կեցնել քեզ — երբ մտադրած ես վազել։ Դէպի յաջո-

ղութիւն առաջնորդող ճամբաները կը լայնան հետզհետէ։ Կրնաս հարիւրաւոր դաշտերու մէջ վազել և ի վերջոյ շահիլ մրցանակը։

Այս տողերը կարգաւու միջոցիդ, կեանքի պայքարը և բոլոր զժուարուցութիւնները կ'ուրուագծուի աչքերուդ առջեւ, կը խորհիս թէ այս բոլորը ուրիշներու համար կարելի է, բայց ոչ քեզի համար։

Եթէ այսպէս կը մտածես կրնաս վայրկեանին տալ որոշումդ, վասնզի մեզմէ ոչ մէկը կրնայ ընթանալ առանց կարենալ տեսնելու մութին մէջ իրեն սեպհական աստղը։ Պէտք է ճշդես ուղիդ, միայն քալելը չէ կարեւորը, այլ թէ ո՞րքան հեռու կրնաս նոյն ուղղութեամբ ընթանալ։ Նշանաբանդ ընտրելէ վերջ սկսէ վազել որպէս մարդ։ Օգտակար ամէն գործ պատուաբեր է, անպատուաբեր է այն՝ երբ յօռի կերպով կը գործադրուի։ Մեր գործը չպիտի ըլլայ այս կամ այն գործը ընտրել, ըլլայ մեքենագէտ, երկրագործ, վարչապետ կամ նկարիչ մը, դիւրին է որոշում տալ, բայց ամենակարեւորն է այնպէս մը պատրաստել ինքզինքդ դպրոցի օրերուդ մէջ, որ աշխարհ քեզ ինչ գործ ալ հրամցնէ, զայն լաւա-

գոյն ընկել զիտնաս: Ուրեմն որոնք են այն ուշագրաւ յատկութիւններն որոնք անխուսափելիօրէն պիտի գտնուին մեր դիմացը: Թերեւս ըլլան շատ բաներ որոնք շատերու կողմէ արարկելի դառնան: Բայց կան մի քանի բաներ որոնց ճշմարիտ ըլլալը ամէնքն ալ կը խոստովանին: Ասոնցմէ մէկը ան է թէ ուէ արժէքաւոր բան կատարելու համար պէտք է ունենալ որոշ նպատակ: Կեանքի մէջ նշանաբան մը պէտք է: Որոշէ ընկելքդ և հաստատամտութեամբ դիմագրաւէ զանոնք:

Հաւատք ունեցիր անձիդ և հետապնդած նպատակիդ վրայ: Մի հաւատարմոնց որոնք սխալ կը տեսնեն ուղիդ և չեղեցնելու կը ջանան քեզ: Յաճախ քեզ և բարձր մեծ բաղձանքներ կան: Բաղձանքներդ թող միշտ բարձրերը սաւառնին: Կառքդ տատկերուն լծէ:

Երկու տեսակ մարդիկ կը տեսնուին ամէն տեղ: (1) Անոնք որոնք բարձր կը պահեն իրենց պատիւը, (2) Իսկ ուրիշներ որոնք կ'աւրին անուննին: Մէկ կամ միւսին անպատճառ կը պատկանիս, հոգ չէ թէ ով ըլլաս դու, հարուստ կամ աղքատ:

Անյաջողութեան պայմաններ:

Եթէ կ'ուզես չյաջողիլ, ամօթ մը ըլլաս քու և քու սիրելիներուդ աչքին, չկրնաս տալ հայրենիքիդ ինչ որ կ'ակընկալէ քեզմէ: Հազարաւոր մարդիկ կան աղքատանոց, անկեղանոց և բանտերու մէջ, կրնաս դիւրաւ անոնցմէ սորվիլ: Ահա չյաջողելու համար ուղղեցոյց մը:

Ունեցիր անհոգ և անփոյթ դպրոցի կեանք մը, իրիկուններդ պարապ անցուր, անպէտ ընթերցանութեամբ պարապէ, 15—20 տարիքիդ մէջ մի գիտնար թէ ինչ պիտի ըլլայ ապագայդ: Ասիկայ է անյաջողութեան գաղտնիքը:

Իսկ թէ յաջողիլ կ'ուզես, կը փափաքիս որ ծնողքդ հպարտանան վրայդ, և

դասընկերներդ հպարտութեամբ յիշեն քեզ և ըսեն թէ՝ «մենք անոր դասընկերներն էինք», և հայրենիքիդ համբաւը քեզմով բարձրանայ, կրնաս այս վայրկեանէն տալ որոշումդ: Բարձր դիրքերու թեւակոխած նշանաւոր անձեր կրնան տալ քեզ այդ գաղտնիքը: անոնցմէ մէկը հետեւեալն է:

Ունեցիր խնամքով ապրուած երկտասարգական կեանք մը, ունեցիր օգտակար զբօսանքներ, շինիչ և կազդուրիչ զբօսաժամեր, լուրջ սերտողութիւն ստող ընթերցանութիւն և լաւ ընկերներ: Ծղզէ ապագայդ, ունեցիր հաւատք կամք և յարատեւութիւն:

Փափաքած բոլոր գիրքերդ թերեւս չունենաս, և կամ ակամայ դպրոցն ալ կիսատ թողելու ստիպուիս: Բայց կրնաս տեղեկութիւն և գիտութիւն ամբարել, և այդ է ամենահետաքրքրական և ամենագործաւոր բանը աշխարհի վրայ: Եւ գիտութեամբ գրեթէ պատանի մը կրնայ մագլցիլ բաղձալի ամենանախանձելի բարձունքներուն: Գիտութեամբ և ժրջանութեամբ կրնայ յաղթել մէկը ամէն բանի «ինչ որ կը մըտածես նոյնը կըլլաս» կ'ըսէ գիտութեան մարդը: Այսօրուան մանկութիւնը վաղուան մարդկութիւնը պիտի ըլլայ:

Եթէ յաջողութիւնը մեզմէ կախում ունի, ինչո՞ւ արդեօք մեզմէ շատերը անյաջողութեան կը մատնուին: Ծիչդ է զանազան են անյաջողութիւններու տեսակները: Շատ քիչեր անյաջողութեան կը մատնուին իրենց կամքէն անկախ պատճառներով: Ոմանք կ'իյնան առ ի չգոյութեան ամփոփման, և կամ չկրնալով յարմարցնել ինքզինքնին, միջավայրին կամ պարագաներուն, ոմանք կ'իյնան որովհետեւ հեռատեսութիւն կը պակսէր իրենց մէջ: Ոմանք կ'իյնան անհոգութեան և յոռի նկարագրի ունենալու երեսէն: Մէկ խօսքով աղայ կամ աղջիկ մը կ'իյնայ որովհետեւ աչքը կը

գոցէ և չի տեսներ պատահութիւնը՝ որ թռչելով կ'անհետանայ անդառնալիօրէն:

Որոշումը տուր և սկսէ քալել: Պատրաստէ ծրագիրդ, նպատակդ, հոգ չէ եթէ նոյն իսկ սպանիական զվեակներ չինես օդին մէջ, գոնէ անոնց տակը մէկ քար դիր: Կրնայ գրադարան մը լեցուիլ եթէ պատմել ուզուի մարդոց «անկարելի է» ըսածները որոնց ամէնքն ալ հաստատամիտ մարդոց միջոցաւ յաջողութեամբ պատկուած են: Մարդիկ հզան որոնք չոգեկառքի գիւտին համար «անկարելիութիւն է» ըսին: Շոգ կենաւ հընարիչին համար մարդիկ ժամանակ մը «խենդ է, ցնորած է» ըսին: Մինչև անդամ Սըր Վօլդըր Սքօթ ըսաւ թէ «խեղաբար մ'ըլլալու է այն մարդը որ լուսուտորել կը յուսայ Լոնտոն քաղաքը լուսավառ կազով»: Մարդիկ որոնք մեզի գիւտեր տուած են, որոնցմով միլիոնաւոր մարդիկ երջանիկ և հարուստ եղած են, մարդոց կողմէ ծաղրուած և հալածուած են, իսկ ոմանք ալ անօթութեան մէջ մեռած են: Ու մենք կը վայելենք այսօր այդ բարիքները սոսկ այդ մարդոց երկաթէ կամք և յամառ յարատեւութիւններէն: Մեղք է եթէ ժամանակդ աննպատակ պարապ բաներով կ'անցնես:

Այն տղան որ հոգի կը դնէ իր գործին մէջ և կը փակչի սրտանց իր զբաղմունքին, ահա աշխարհի սպասած տղան անիկայ է: Ահա անիկայ է այն տղան որուն մէկը տալու պատրաստ է 10,000 սկիւ տարին: Ասիկա պիտի ըլլայ այն տղան որուն գծած նկարը՝ բոլոր աշխարհ պիտի ուզէ տեսնել: Ասիկայ պիտի ըլլայ այն տղան որ պիտի կրնայ կառավարել հսկայ վաճառատուն մը: Ասիկայ պիտի ըլլայ այն տղան, որուն մայրը ըլլալ պիտի բաղձայ ամէն կին աշխարհի վրայ:

Հպարտացիր հայրենիքիդ համար, շատ գործեր ունիս կատարելու հայրենիքիդ համար, շատ ծուլութիւններ կան հոն քեզի համար-շտկիլու, շատ տխուր, շատ անհաճոյ, շատ սխալ բաներ կան որոնց համար հայրենիքդ մեծ ակնկալութիւններով կ'սպասէ մեծնալուդ: Հայրենիքիդ փայլուն անցեալը, անոր սիրուն լեռն ու դաշտերը, ծառ և ծառիկները, կորուստը, հին տներակները, ինչ որ ալ ըլլայ սրտիդ մէջ անիկայ է քեզ համար լուսագոյն Հայրենիքը: Ան արցունք աչքերով կ'սպասէ քեզ, կը դիտէ քեզ գորովալից մօր մը պէս, առաջին թոթով լեզուդ և տկար քայլերով քալիլ սորվիլդ անուշ կ'երեւնայ անոր: Տաճար և սրբավայրերուն մէջ մայրենի լեզուով աղօթքներն հրեշտակներն իսկ վար կ'իջեցնեն: փառք մըն է քեզ համար որ Հայ ծնած ես և հայրենի կը խօսիս: Երբ անոր փառքը աւելցնելու աշխատիս:

Քաջ եղիր, մի վհատիր երբ սխալ մը գործես: Աշխարհի ամենայաջող մարդոցմէ մէկը ըսած է. «Սխալներէն երբեք մի խրտչիր, ես շատ մը սխալներ գործած եմ և ուրիշ սխալներ ալ պիտի ընեմ»: պէտք է լաւ գիտնաս թէ՛ այն մարդը երբ սխալ չէ գործած, գործ մըն ալ չէ ըրած:

Ամէն բանի մէջ պատրաստ եղիր, ձեռնարկած գործերուդ մէջ ցոյց տուր կարողութիւնդ: Չարէն զատ ո'չ մէկ բանէ վախցիր: Նախանձախնդիր եղիր բարիք ընելու, այս կերպով պիտի ծառայես հայրենիքիդ, պիտի պատուես Աստուածդ, սիրոյ և խաղաղութեան շաւիղին մէջ պիտի քալեն քու հետեւորդներդ, և ամպեր չպիտի մթագնեն անոր կապտագոյն հորիզոնը, պիտի տաս անոր խաղաղութիւն մը որ աշխարհի վիշտերը չպիտի կրնան վրդովել անոր ծաղկաւետ դաշտերը:

ՈՒՂԵՐՁ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-ԻՆ

Ողջո՛յն Բե՛զ ողջո՛յն «Նոր Աւետարեի»,
Մաղթեմ Բե՛զ երկար կեանք մ'աւետարեր .
Որպէսզի ցոյց տաս կեանքն իտէալին
Կեանքը վըսեմին, — Անտեսանելին :

Նիւթապաշտական նոր տեսութիւններ
Մեր Նոր Սերունդին հոգին են խարեր .
Թիւր գաղափարներ և կասկածախտեր
Մեր Սուրբ Հաւատքը հիմէն են խախտեր :

Բոչոպ, սեւ օրեր, մըրիկներ ահեղ
Սփիւռ ցրուեցին Հայը զերթ մղեղ .
Թափառոտ ցեղիս Նոր Աւետարեի՝
Լուսաւորիչի լոյս Հաւատքը բե՛ր :

Գիտութիւն, ճոխ կեանք, վայելք աննուէր
Ձե՛ն կարող փրկել ազգերն անբեւեռ .
Նո՛ր Աւետարեի անդուլ, մեծածայն
Տարփողէ՛ ցեղի՛ս «Ի Բեզ Յուսացայն» :

Խնկէ՛ պապերուս այն բարեհամբոյր
Սրտի բուրվառին խունկն հղեմարոյր .
Հըրագինէ՛ մեզ հրովն աստուածավառ
Սիրոյ խորանին նախնեացս ուղղափառ :

Բու մեծ կոչումիդ վըսեմ Սինայէն
Որոտա՛ պատգամ լեզուով հըրեղէն ,
Սկիպտիկ, անյոյս մեր սրտին զաճէ
Հզօր Հաւատքի ոգին ներշնչէ՛ :

Կանխածայնէ՛ միշտ Քաջըն վարդանի
Ու Սուրբ Ղեւոնդեանց հաւատքն կենդանի .
Շեփորէ՛ ցեղիո սրտով քաջարի ,
Հաւատքի սաղմը Նոր Աւարայրի :

Լարնայս

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ ՈՉ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ԻՐԱՋԵԿ

«Եւ եօքը աւետանկներուն մէջ Ողջոյ
մարդոյ նման մեկը տեսայ» Յայտ. 1. 13:

Նշանաւոր անկրօն մը իր գաղափարը
հաստատելու համար Տր. Փարքըրի ը-
սելէ ետքը թէ Աստուած եթէ գոյ ըլլար
չպիտի թողուր որ Ստեփաննոս սպան-
նուի, հարցուց. «Աստուած ի՞նչ ըրաւ
Ստեփաննոսի համար:» Տր. Փարքըր
իբր պատասխան ըրաւ. «Աստուած՝ այդ

վայրկենին Կառապող այս մարդը կը պատրաստէր սա աղօթքը ընելու, «Ո՛վ Տէր, այս մեղքը մի՛ սեպիր անոնց՝ Աստուած այս մարտիրոսին սիրտը իր թշնամիներուն ներելու համար պատրաստելովը, անոր համար աւելի բան մը ըրած եղաւ քան իր զօրքերովը զայն այս անգութ մահէն ազատելը»:

Ներկայիս թիւով քիչ չեն այն տկար և տգէտ քրիստոնեաները, և անկրօնները որոնք նոյն հարցումը կը կրկնեն: Բայց Յիսուս՝ ճշմարիտ հաւատացեալներու կեանքին ամէն տեսակ պարագաներուն մէջ անոնց հետ և անոնց մէջ կը գտնուի, և ինքզինքը անոնց վիշտերուն միջոցաւ կ'արտայայտէ, և այս կերպով առիթ կ'ստեղծէ որ շատերը իրեն հաւատան: Հետեւեալը ասոր կենդանի վկաներէն մէկն է:

Երիտասարդ մը, Աստուածաբանական ճիմարանէն հազիւ ուսումնաւարտ, հրաւիրագիր կ'ստանայ Վեր. Էն,— որ երկու տարի իր ուսուցիչը և չորս տարի իր հովիւը եղած էր — իբրեւ օգնական անոր հետ գործակցելու համար: Երիտասարդը այս հրաւերը մերժած էր, նախապատուութիւն տալով տկար և շատ փոքր եկեղեցիէ մը եկած մէկ հրաւերին: Այս արարքին ծանօթ եղող բարեկամները և դասընկերները, երբ ստուգեցին իրողութիւնը յիմար նկատեցին զինքը: Բայց յիշեալ երիտասարդը յիմար չէր, զործին վսեմութեան և պատասխանատուութեան բազմաթիւ մը իր տկարութիւնը և թերեւ վախկոտութիւնը պատճառը պէտք էին եղած ըլլալ այսպիսի պզտիկ և բազմատարար աւելի դժուար կացութեան մէջ եղող եկեղեցիի մը հրաւերը ընտրելուն:

Այս եկեղեցին, որմէ հրաւերւոյս ցած էր ինք, 1895ի ջարդի միջոցին իր շատ մը թանկագին անդամները կորսնցուցած և ոչ պատուաբեր կերպով հազիւ անկէ զուրս ելած էր: Այս մնացորդը

գրեթէ այրիներէ եւ որբերէ կը բաղկանային, և յետին թշուառութեան ենթարկուած էին: Իրենց մէջ բարձր ուսում առած մարդեր չկային, բայց եկեղեցական և կրթական գործերը կը զընահատէին եւ քարոզիչի մը ծախքին մասնակցելու համար իրենց կարելին կը խոստանային, եւ այս կերպով այս երիտասարդ քարոզիչը հրաւիրելու կը համարձակէին:

Հետեւեալ կերպով կրնանք ամփոփել 130—140 որբեայրիներէ կազմուած այս ժողովուրդին 18-19 տարուան կեանքը, և անոր ներքին ու արտաքին պայմաններուն մէջ յառաջ եկած փոփոխութիւնները: Իրենց աւերուած դպրոցի և եկեղեցիի շէնքերը նորոգեցին և զարգարեցին, քիչ ետքը այս շէնքերը անբաւարար ըլլալով դպրոցի նոր շէնքեր շինեցին, և նոր եկեղեցական շէնքի մը կառուցման համար շատ թանկարժէք շէնք մը ծախսու առին, ապագայ շէնքին համար ամէն տարի դրամ հաւաքելով կ'ուրիկ զուժար մը մէջտեղ բերին: Տարիներէ ի վեր հազիւ կրցած էին վարժուհի մ'ունենալ, բայց քիչ ետքը անոր թիւը երեքի բարձրացուցին, և առով ալ չգոհանալով աւելի բարձր դպրոց մը պահելու փառասիրութիւնը ունեցան, և յաջողեցան իրենց այս պաշտփարը իրաւորածել: Կողէճաւարտ ուսուցիչով մը զործի սկսան, և թէպէտ յաջողեցան պատրաստել կարգ մը՝ որ ուղղակի գուլէճ պիտի մտնէր՝ Մեծ Պատերազմի պատճառաւ ստիպուեցան ամէն ինչ անկատար ձգել:

Այս չըջանի միջոցին մէկէ աւելի գուլէճէ ուսումնաւարտներ ունեցած են, գուլէճ յաճախողներ միշտ անպակաս եղած են, Այնթապի Ամերիկեան Աղջկանց Վարժարանը աւարտող իրենց աղջիկներէն վարժուհիներ, տիկիներ, աւետարանչուհիներ ունեցած են, Մարաշի Աղջկանց Գուլէճէն ուսումնաւարտ և հատ

մ'ալ թերաւարտ աղջիկներ ունեցած են:

Այս տկար ու փոքր հօտը, որ հաւատք ընծայելու արժանի միջոցներէ զուրկ էր, կամայ կամայ սկսաւ զգալի յառաջդիմութիւն ցուցնել նաեւ իր բեմին հանդէպ ունեցած պարտականութիւններուն մէջ: Չոր հաջը հազիւ գտնող այս ժողովուրդին մէջ այնպիսի փոփոխութիւններ յառաջ եկան որ, անոր թէ՛ բարեկամները և թէ՛ թշնամիները սկսան զարմանալ, և որոնք հասկըցան թէ այս բոլորին պատճառն է անոր մէջ թաքուն ոյժի մը գոյութիւնը:

Կայսեր և դրացիին հանդէպ պարտականութեանց մէջ տնուշ զգացում մը և եռանդ մը երևան եկաւ. այնպէս որ տարին չըրացած անոնք իրենց տուրքերը կը վճարէին և ալ չկրցողներուն ալ օգնելով տեղական կառավարութեան և պաշտօնէութեան զովասանքին կ'արժանանային: Անոնք երբ տեսան թէ իրենց թուրք դրացիները շինութեան ձեռնարկուած դպրոցական շէնքի մը կառուցման մէջ դժուարութիւն կը կրէին, իրենց լուծմաներովը իրենց համակրութիւնը յայտնեցին և այս կերպով Աւետարանի ազդեցութիւնն ու բոլոր երեւան հանցին: Այս անցեալ 18-19 տարիներու պատմութեան միջոցին իրենցմէ ոչ մէկը օր մ'իսկ կառավարական բանտին մէջ հիւր եղած չէր:

Ափսոս որ Ընդհանուր Պատերազմը հազիւ պտղաբերիլ սկսած այս պարտէզը արմատախիլ բրաւ և անոր տունկերը ցրուեց օտար հորիզոններ, ուր եկեղեցիին օգտակար և թանկագին անդամներն ու անդամուհիները բժաւոր տենդի վտհ գացին: Վերապրողները իրենց հայրենիքը վերագարծան: Բայց իրենց հովիւը խորհելով որ նորէն կազմակերպեալ եկեղեցի մը ունենալ կասկածելի է, և այսքան երկար տարիներէ հտքը նսրէն հոն մնալ օգտակար չպիտի ըլլայ, ստիպեալ իրարմէ բաժնուեցան: Տա-

րի մը հտքը սակայն իրենց նախկին հովիւը կրկին պահանջեցին: Անոնց փափաքնու ջանքը հովիւին ուշադրութիւնը գրաւած և նորէն անոնց ծառայելու պարտականութիւնը իրեն զգացուցած էին: Վերջին երեք տարիներու միջոցին նախախնամութեան կատարած հրաշքները հովիւը ամօթահար թողած են: Բայց դժբախտաբար երկրորդ տեղահանութիւնը այս նոր կազմակերպութիւնը նորէն քանդած է:

Կ'երևի թէ եկեղեցիին Տէրն ու Հաստատիչը անոր մէջն է, և մարելու մօտ ելող այս աշտանակը զարծեալ նորոգել մտադրած է: Այս մնացորդին մէկտեղ գտնուած մեծամասնութիւնը առանց ուէ տեղէն օգնութիւն ստանալու, Աւար և Ֆրանսական կառավարութեանց օժանդակութեամբ յարմար տեղ մը գեղեցիկ տուներու, գոհացուցիչ շահի եւ ապրուստի միջոցի տէր եղած են. և այսօր իրենց թուրք բարեկամները իրենց տուները հիւր կ'ընդունին և անոնց հետ հաճելի յարաբերութիւն և խօսակցութիւն կ'ունենան:

Այս անգամ առանց ուէ արտաքին օժանդակութիւն ունենալու իրենց ջանքերովն ու զոհողութեամբը եկեղեցիի մը և դպրոցի մը շէնքերուն տէր եղած են, և իրենց ուսեալ մէկ զաւակին, քարոզիչին, առաջնորդութեամբը Աստուծոյ թագաւորութեան կը ծառայեն:

Այս պատմական իրողութիւնները, որ խղճմտօրէն զիտող բարեկամներուն շատ զարմանալի կը թուին, այրելով չփճացած եւ տակաւին կենդանի այս թուփին մէջ զօրաւոր կերպով ցոյց տուած է եօթը աշտանակներուն մէջը կայնող Անձին ներկայութիւնն ու ոյժը:

Ահա պատմական փաստ մը անոնց որ «Դուք է Քրիստոս» կը հարցնեն: Այս իրողութիւնը լաւ օրինակ մըն է մեր բոլոր եկեղեցիներուն որոնք կ'ուզեն օրինակ առնել և հասկնալ: «Դուք ալ այսպէս ըրէ» եւ պիտի սորվին Քրիստոսի ուր ըլլալը:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԶՈՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ Ը. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ

Հետեւեալը գրուած է Ս. Ք. Զանից Ընկերութեան երիտասարդ անդամուհիներէն մէկուն կողմանէ իր իսկ սկսնակի գրչով: Ուրախութեամբ կ'ուզեմք տեղ տալ մեր երկսեռ երիտասարդութեան կողմանէ գրուած յօդուածներու մեր տեղին ներած չափով, եւ անոնց պատշաճութեան համեմատ:

Ծնր. Խմբ.

Այս ժողովը տեղի ունեցաւ Օգոստոս 5ին Պերլինի մեծ սրահներէն մէկուն մէջ: 1400 է աւելի երիտասարդներ ժողովուած էին հոն, ժողովներուն մասնակցելու համար: Սրահը շատ պարզօրէն վարդարուած էր ներկայացուած ազգերու զրօշակները շքեղութիւն կուտային սրահին: Ամպլոնին հետեւը մեծ գիրերով Մարթայի խօսքերը գրուած էին, «Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ,» Յովհ. 11. 28: Ութը հարիւր անդամներէ բաղկացած երգչախումբը ամպլոնին հետեւը նստած էին, անոնց քով փչողական գործիքներէ կազմուած նուագախումբ մը եւ կիթառներէ կազմուած ուրիշ նուագախումբ մը կար: Անոնց առջեւ հարիւրէ աւելի նշանաւոր ամենազգիներկայացուցիչներ զիրք զբաւած էին: Այս ընդարձակ սրահը լեցնող ներկաներու մէջ կային 700 Ամերիկացիներ եւ 120 ուրիշ երկրներէ եկողներ, իսկ մնացած բացարձակ մեծամասնութիւնը Գերմանացիներ էին:

Համաժողովին նիւթն էր «Քրիստոսի կոչը Այսօրուան Երիտասարդներուն» ժողովը սկսաւ Լուսերի նշանաւոր «Աստուած մեր բերդն է Հաստատուն» երգով: Այս երգը այդչափ եռանդով զգացումով երգուեցաւ որ, կարծես թէ սրահին պատերը շարժեցան: Գերմանացիները արդէն երգեցողութեան ձիրքը ունին. եւ ո՞վ կրնայ յուսահատեցնել երգող սիրտ մը:

Գերմանիոյ նախագահ Հինտէնպուրկ նամակով մը համաժողովին անդամներուն րարեգալուստ եւ յաջողութիւն մաղթեց, Մ. Նահանգացի նախագահ Հովըրի եւ Ֆրանսայի նախագահ Տումէրկի կողմէ հս շնորհանորակա՛ն եւ քաջալերական նամակներ առնուեցան:

Տր. Քէլի, Եւրոպայի Զանից Ընկերութեանց նախագահը, խօսեցաւ Քրիստոսի կոչին մասին: Սա հարցումը իր միտքը զբաղեցուցած էր թէ, այսօրուան երիտասարդները ինչպէ՞ս պէտք է շահիլ, եւ ինչպէ՞ս կրնանք նոր մտայնութիւն եւ նոր աշխարհ մը ստեղծել մէկ սերունդի մէջ: Հետեւեալ խօսքերը ուղղեց ժողովուրդին. — Աստուծոյ Թագաւորութեան պալուն համար միայն մէկ ճամբայ կայ, որ է անձնական ապաշխարութիւն, միեւնոյն ատեն պէտք է ունենալ անձնական հաւատք՝ ստանալու համար նոր կեանք մը՝ որ Աստուծոյ պարգևն է Յիսուս Քրիստոսով: Քրիստոսի կրօնքը ազգային կրօնք մը չէ, այլ տիեզերական: Մէկ հաւատք, մէկ յոյս եւ մէկ սէր կայ, ինչու որ մէկ Փրկիչ եւ մէկ Վարդապետ կայ, Յիսուս Քրիստոս: Զանից Ընկերութիւնը կ'աշխատի իր անդամները առաջնորդել պարզ եւ զօրաւոր հաւատքի, պահելու զանոնք Աւետարանի ազգեցութեան տակ՝ որպէս զի ունենան զուարթ եւ զօրաւոր սիրտ մը՝ յազմելու բոլոր դժուարութեանց:

Տր. Փոլինկ, բոլոր Զանից Ընկերութեանց նախագահը՝ սապէս ըսաւ. «Զանից Ընկերութեանց Համաժողովը պատգամ մը ըլլայ Աւետարանչութեան, եւ Քրիստոնէական խաղաղութեան: Վեր. Էրնէսթ Սովլէն Զուիցերիոյ Զանից Ընկերութեանց փոխ նախագահը խօսեցաւ «Երիտասարդները» նիւթին վրայ եւ զանոնք երեք խումբերու բաժ-

նեց: Ա. Երիտասարդութեան թիթեռնիկները կամ զուարճասէրները: Բ. Անոնք՝ որ երբ ժւրիշ ազդեցութենէ ազատին կ'ուղղուին դէպի Յիսուս: Գ. Անոնք որ՝ սխալ լոյսերով կ'առաջնորդուին:

Գերմանացի քարոզիչ մը ըսաւ որ «Մենք մեծ բաներ ընելու ենք մեծ զոհողութեամբ:» ուստի ըսաւ

Ա. Ինքզինքդ նուիրէ: Բ. Հաւատարիմ եղի՛ր թէ՛ ինքզինքիդ թէ՛ ուրիշներուն և Գ. Մանաւանդ ուղիղին:

Հէր ֆօլ, Գերմանիոյ Ջանից Ընկերութեանց քարտուղարը, Քրիստոսի բաւարարութեան և իրաւունքին մասին խօսելով ըսաւ. «Քրիստոս աշխարհի վրայ եղած փոթորիկներէն լուր ունի: Մենք մեր Տէրը օգնութեան կը կանչենք փրկելու համար վտանգի մէջ եղողները: Քրիստոնէական կրօնքը Քրիստոսի զօրութիւնը սեփականացնել է:

Օգոստ. 10ին զիշերը 31 երկիրներէ ներկայացուցիչներ, իրենց ազգային գրօններով քաղեցին դէպի ամպիոնը և գրօնները մասնաւոր բանի մը մէջ գրին: Ասոր նպատակն էր ցուցնել թէ «Ամէնը Քրիստոսով մէկ» են, բոլոր տարբերութիւնները ջնջուած էին Յիսուսի սիրով: Այս ժողովի վերջնաւուն ժօտ բոլոր անդամներ իրենց ձեռքերը վերցնելով մեծ շղթայ մը կապեցին ի նշան բարեկամեցողութեան և խաղաղութեան:

Միջազգային հաղորդութեան ժողով մը ունեցան Պերլինի մեծ եկեղեցիներէն մէկուն մէջ: Տր. Փոլինկ քարոզ մը տուաւ «Ասիկա ըրէք զիս յիշելու համար» նիւթին վրայով, և հետեւեալ կէտը չհշտեց. «Մենք կը յիշենք զայն իբր մարդոց Փրկիչ, Աստուծոյ որդի, կորսուածը փնտռող և փրկող. բոլոր խաչի ճամբան միզի համար քաղող և իր կիսնքը աշխարհի համար զոհող:»

Պատանիները խաչ մը շինեցին անոր նպատակը ցուցնելու համար:

Նախ խաչին հիմը գրին և հիման վրայ հետեւեալ բառերը կրող խաւաքարտներ դրուեցան:— Փրկութիւն, պատսպարում, զօրութիւն, ապահովութիւն, հանգիստ և հաստատութիւն: Վերջը խաչը շինուեցաւ. խաչը երկու կողմ ունէր, փայլուն և մութ: Մութ կողմը գրուած էին ատելութիւն, չարութիւն, անձնասիրութիւն, ֆիզիքական զօրութիւն և մահ: Փայլուն կողմը գրուած էին, սէր, բարութիւն, նուիրում, տառապելու պատրաստ, Սուրբ Հոգի, կեանք և յաղթութիւն:

Այս ժողովներուն ամէնէն տպաւորիչներէն մէկը եղաւ փառաբանութեան ժողովը, որու մէջ նշանաւոր արուեստագէտներու կտորներէն նուագուեցաւ:

Գերմանացիները մեծ փափաք ունին հոգեւոր բաներու, անոնց երգեցողութիւնը շատ աւելի ազդեցիկ է քան ուրիշ ազգերունը: Եթէ երկրի վրայ այսպէս կրնայ երգուիլ հապա ինչպէս պիտի ըլլայ երկինքի մէջ տասը հազար անգամ տասը հազարներու երգեցողութիւնը: Փառք Աստուծոյ երաժշտութեան համար, որ հոգին կը շարժէ ու կարծր սրտերը կը հալեցնէ: Ապահովաբար Աստուած ինքը գլխաւորն է երաժշտագէտներու: Ձարերը երգ չունին:

Տր. Փոլինկ Գերմանիոյ Ջանից Ընկերութեանց նախագահին նուէրով մը իր շնորհակալութիւնները յայտնեց և իր վերջին պատգամը տուաւ երիտասարդներուն խօսելով «Երիտասարդներ՝, Վարդապետը եկած է և ձեզ կը կանչէ,» նիւթին վրայ: Նախագահ Հինտէնպոլկ իր նկարը զրկեց Լիմկի իբր նուէր:

Ընդհանուր պատերազմէն հոգքը Եւրոպայի մէջ ամէնէն մեծ համաժողովը ասիկա եղած է որ Քրիստոնէական նըպատակի մը համար, Սուրբ Անուան մը, այսինքն Քրիստոսի թանկագին անուանը համար ժողովուած էին: Այս անունն է որ վերցուցած է բոլոր արգելքները և միացուցած է իրարու թշնամի ազգերը:

Է. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

Թէ ԻՆՉՈ՞Ւ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ ՀՆՁԵՑԻՆ

(Շար. եւ Վերջ)

Թարգմ. Յ. ՊԱԳԳԱԼԵԱՆ

Քաղաքը պարիսպով շրջապատուած էր, ու պարիսպին վրայ մեծ դռներ կային: Երկու տղայք այն դռներէն մէկին մօտեցան և երբ ներս մտնելու վրայ էին՝ ձիւնին վրայ սեւ բան մը տեսան իրենց ճամբուն մէկ կողմը. ուստի անոր քով գացին տեսնելու թէ ինչ էր:

Ասիկայ խեղճ կին մըն էր որ հոն ինկած մնացեր էր, այնքան տկար որ քալելու կարողութիւն չունէր, կակուղ ձիւնը՝ որուն վրայ ինկեր էր, իրեն բարձի տեղ կը բռնէր, և ինք, անոր վրայ սկսեր էր քնանալու, և շուտով այնքան խորունկ պիտի քնանար այդ ճամբուն օդին մէջ. որ ոչ ոք պիտի կրնար արթննցնել զինքը: Պետրոս իսկոյն տեսաւ աս ամէնը, ծնրադրեց անոր քով և ջանաց արթնցնել զայն, մինչև իսկ թեւէն քաշելով, իրր թէ հետը տանելու փորձ կ'ընէր, կնոջ երեսը իր կողմը դարձուց, որպէսզի երեսին քիչ մը ձիւն քսէ, ու վերջապէս րոպէ մը լուռ մըտածելէ վերջ, ոտք իլաւ ու ըսաւ. «Ծար չըկայ, փոքրիկ եղբայրս, դուն մինակդ գնա:»

— Ի՞նչ, մինակս, գոչեց փոքր եղբայրը: Իսկ դուն չպիտի տեսնես Ծընունդի արարողութիւնը:

«Ոչ,» ըսաւ Պետրոս, ու իր կոկորդէն ելլող հեկեկանքը չկրցաւ ծածկել: «Սա խեղճ կնկան նայէ, իր երեսը տաճարին պատուհանին մէջի Աստուածածինին երեսին կը նմանի, և եթէ իրեն նայող մը չըլլայ, սառելով պիտի մեռնի. հիմայ ամէն մարդ եկեղեցի գացած է, աս տեղիւր մարդ չէ մնացած. ուստի, ետ եկած ատենդ հետդ մարդ բեր որ ասոր օգնենք: Ես մինչև գալդ զինքը կը

չփեմ որպէս զի տաք մնայ ու չսառի, թերևս քիչ մը վերջը կրնայ ուտել այն կտոր մը կարկանդակը՝ որ զրպանս մընայած է:»

— Բայց ինձի համար անտանելի է քեզ հոս թողուլ և մինակ երթալ. ըսաւ փոքր եղբայրը:

«Պէտք չէ որ երկուքս ալ զրկուինք պաշտամունքէն,» ըսաւ Պետրոս. «Աւելի աղէկ կ'ըլլայ եթէ մինակ ես զրկուիմ, դուն եկեղեցիին ճամբան կրնաս գտնել, երբ հոն երթաս պէտք է որ ամէն տեսածդ ու լսածդ երկու անգամ տեսնես ու լսես, մէկը քեզի համար, փոքրիկ եղբայրս, մէկն ալ ինձի համար: Տարակոյս չունիմ որ Յիսուս—Մանուկը զիտէ թէ որչափ կը սիրէի քու հետդ գալ և իրեն երկրպագութիւն ընել. եւ ո՛հ, անուշ եղբայրս, եթէ կրնաս պատահութիւն մը գտնել, կամաց մը սեղանին մօտեցիր, անանկ ատեն մը որ ուրիշներու ճամբան չխափանես, սա արծաթ գրամս տար և իբր իմ նուէրս սեղանին վրայ դիր, նայէ որ ուրիշներ չտեսնեն դնելդ: Մի մոռնար այս տեղը՝ ուր ինձմէ կը բաժնուիս. և ներէ ինձի որ հետդ չեմ երթար:»

Այս կերպով ան ստիպեց որ իր փոքր եղբայրը աճապարէ ու շուտով քաղաք հասնի: Ինք արագ արագ աչքերը կը գոցէր ու կը բանար որպէսզի արցունքները դուրս չգային, երբ կը լսէր իր հեռացող եղբոր քայլերուն խշրտոցը ձիւնին վրայ:

Փոքրիկ եղբայրը աներևութացաւ վերջալոյսին մէջ: Որքան դժուարին էր կորսնցնել Ծնունդի տօնախմբուն թեանց երաժշտութիւնն ու փառաւոր

արարողութիւնները, որոնք տեսնելու համար այնքան ատենէ ի վեր պատարաստութիւն տեսներ էր, որ անոր տեղը հոս, այս միանակութեան մէջ ձիւնին վրայ ժամանակ անցունել:

Այն իրիկուն այդ մեծ եկեղեցին հըրաշալիօրէն զարդարուած էր. ամեն մարդ կ'ըսէր թէ անկէ առաջ երբեք այնչափ փայլուն ու գեղեցիկ չէր եղած: Երբ հրգեհոնը կը նուագէր, ու հագարաւոր ժողովուրդ կ'երգէին, ձայնէն պատերը կը դողային, և քաղքին պատին դուրսը, հեռուն գտնուող փոքրիկ Պետրոսին իսկ կ'զգար թէ երկիրը կը շարժէր իր բոլորովին:

Պաշտամունքը չվերջացած՝ սեղանին վրայ դրուելիք նուէրներու մատուցման արարողութիւնը սկսաւ: Հարուստները հպարտութեամբ կը յառաջանային դէպի սեղանը՝ հոն իրենց նուէրները մատուցանելու Յիսուս—Մանուկին: Ոմանք բերած էին հիանալի գոհարներ, ոմանք զամբիւղներով ոսկեղէն նուէրներ, այնքան ծանր որ հալիւ կրնային գետնէն վերցնելով տանիլ դէպի սեղանը. մեծ հեղինակ մը իր երկար տարիներու աշխատութեան արդիւնքը եղող գիրքը բերած էր: Ասոնց ամէնէն ետքը այն երկրին թագաւորը եկաւ, ու սեղանին մօտեցաւ. ամէն ոք կը յուսար թէ ինք պիտի արժանանար Ծնունդի զանգակներուն մեղեդիին: Ամբողջ ժողովուրդը ափ ի բերան կը դիտէին երբ թագաւորը իր գլխէն հանեց իր արքայական թագը, որ ամէն կողմէն թանկագին քարերով զարդարուած էր, ու դրաւ գայն սեղանին վրայ, նուիրելով գայն սուրբ Մանուկին: Ինչպէ՞ս կը փայլէր թագը. «Անտարակոյս» կ'ըսէր ամէն մարդ, «հիմայ պիտի լսենք զանգակներուն ձայնը, որովհետեւ ասկէ առաջ երբեք այսպիսի բան մը պատահած չէ»:

Սակայն միայն ցուրտ քամիին ձայն

նը կը լսուէր աշտարակին վրայէն. ու մարդիկ իրենց գլուխը կը շարժէին, և ոմանք կը կրկնէին թէ իրենք այդ զանգակներու պատմութեան երբեք չեն հաւատար, և կը տարակուսին թէ առաջ անոնք երբեք հնչած պիտի ըլլային:

Արարողութիւնը վերջացաւ, և երգիչ խումբը սկսաւ երգել վերջին երգը: ... Յանկարծ երգին առաջնորդը նուազը զաղբեցուց այնքան անմիջական կերպով՝ որ կարծես թէ կայծակնահար եղած էր. ամէնուն աչքերը դարձան ծերունի հովիւին՝ որ սեղանին քովը կայնած՝ ձեռքովը նշան կ'ընէր որ լուռ կենան: Սաստիկ լուծիւն մը եղաւ, ոչ ոք կը շարժէր, ու երբ ամէն մարդ ուշադրութեամբ մօտիկ կ'ընէր, ահա մեղմ միայնգամայն յստակ կերպով օգին մէջէն թըրթըռալով կուգար աշտարակին զանգակներուն ձայնը: Մեղեդին թէեւ այնքան հեռուէն սակայն խիստ որոշ կը լսուէր, այդ եղանակը այնքան քաղցր էր որ անկէ առաջ լսուած ոեւէ բան չէր կրնար բաղդատուիլ անոր հետ. երկինքէն հասնող այդ հմայիչ թրթռումներուն ազդեցութեան տակ ժողովուրդը պահ մը լուռ ու մունջ նստեցաւ, կարծես թէ գետնին զամուած էին: Այնուհետեւ ոտքի ելան և ամէնը մէկ սեղանին կողմը նայեցան թէ արդեօք ինչ մեծ նուէր արթնցուցած էր զանգակներուն այնքան երկար լուծիւնը:

Հոն տեսան փոքրիկ տղու մը անշուք կերպարանքը, որ ամէնալով սեղանին քով գացեր էր, երբ ամեն մարդ ուրիշ կողմ կը նայէր: Փոքրիկ եղբայրն էր ան, որ Պետրոսին փոքրիկ արծաթեայ դրամը դրած էր սեղանին վրայ:

Քսաներորդ դարուն մէջ պատերազմը, կախաղանը, ատելութիւնը, սահմանագիծերը, տոկոսները մեռած պիտի ըլլան. և մարդը պիտի ապրի:

Վ. Հիլի0

ՇՈՂԵՐ ԵՒ ՆՕԹԵՐ

ԻՆՉ ՈՐ ՔԵՉ ՍԻՐԵԼԻ Կ'ԸՆԷ

Սակաւաթիւ գորաւարներ իրենց զինուորներուն կազմանէ, թիւրէնէն աւելի սիրուած են, որ Լուի Ժ. Ի Ժամանակ Ֆրանսայի Մարաշախտ էր Գաղտնիքը հոս էր. երբ թիւրէն պատերազմի մէջ յաղթանակ մը կը շահէր իր տեղեկագրութեանց մէջ միշտ սապէս կը գրէր. «Մենք յաջողեցանք», և այս կերպով բանակին մնացած մասին ալ մեծ վարկ կ'ապահովէր: Իսկ պարտութեան պարագային «Ես կորսնցուցի» կը գրէր, բոլոր դատապարտութիւնը ինքը իր վըրան առնելով:

Միշտ առաջին ըլլալու հետամտիլ և առաջին շարքերուն մէջ քեզի դիրք մը ապահովելու համար յաւաջ նետուելիքու ընկերակիցներուդ մէջ մեծ անհանգըստութեան պատճառ կ'ըլլայ, կ'ըսէ մեծ քարոզիչ մը:

ԵՐԳՈՂ ԵՒ ԿԵԱՆՔԸ

Երգող կրօնք մը յաղթող կրօնք մ'է: Երգող եկեղեցի մը յաղթող եկեղեցի մըն է: Մինչև հիմայ Գերմանները կ'ըսեն. «Լուստեր՝ իր երգերովը յաղթեց մեզի»:

Երբ Անգլիոյ Փլիմութհ քաղաքէն «Մէյ Ֆլուուըր» նաւը մեկնեցաւ, իր տարած բողոքականները-որոնք կրօնական ազատութիւն գտնելու համար Ամերիկա կ'ուղևորէին և պատմութեան մէջ փիլիքիմս (պանդուխտներ) անունով ծանօթ են—Դաւիթի սաղմոսները կ'երգէին, եւ այդ «սրբազան երաժշտութեան ներշնչումին տակ անոնք նոր կորով կ'ըստանային՝ յանդգնօրէն անեղբ ջուրհրու վրայէն ճամբորդելով անձանթ ցամաքը հասնելու համար»:

Երկու Սկովտացի աղջիկներ իրենց մահուան պատիժին գործադրութենէն մի քանի վայրկեան առաջ 23րդ Սաղմոսը երգեցին: Ամենազգի շատ մը մարտիրոսներ երգելով զիմաւորած են մահը:

Երգը և նուազը հրաշագործ ազդեցութիւն ունին կեանքին վրայ: Շատ մը մարդեր փրկուած են երգի մը ազդեցութեամբ: Մեծ աւետարանիչ Մուտի իր յաջողութեան մէկ մեծ մասը կը պարտի Սանքի աննման երգեցողութեանց: Ջարմանալի չէ որ աշխարհի փրկութիւնը երկնային երաժշտութեամբ աւետուեցաւ՝ երբ մսուրին մէջ մանուկ մը ծնաւ:

Ներկայիս օտար դաշտերու մէջ կը գործեն 29,000 Բողոքական միսիոնարներ, որոնք կը ներկայացնեն 380 միսիոնարական ընկերութիւններ: Լոնտոնի միսիոնարական ընկերութիւնը ունի 281 միսիոնար իր օտար դաշտերուն մէջ ուր վերջացող տարուան մէջ քրիստոնեաներու թիւը 57,000 աւելցած է, ընդհանուր թիւն է 627,000:

1800ին Ռուսիայէն գուրս բոլոր Եւրոպայի Կաթոլիկները՝ բնակչութեան հարիւրին 71ը կը կազմէին, և ներկայիս հարիւրին 60ը:

1925ի մէջ Կաթոլիկ միսիոնարական դաշտերու մէջ քրիստոնեաներու թիւն էր 13 միլիոն, և Բողոքականներուն էր 8 ուկէս միլիոն:

Աւստրիոյ մէջ 1919-1927ի միջոցին 60,000 Կաթոլիկներ Բողոքական եղած և 17,000 Բողոքականներ Կաթոլիկ եղած են:

Գերմանիոյ մէջ 1921-1925ի միջոցին տարին 7,000 աւետարանականներ Կաթոլիկ եղած և տարին 11 հազար Կաթոլիկներ Բողոքական եղած են:

Ռուսիոյ մէջ մինչև ասկէ մէկ տարի առաջ սպաննուած են 31 եպիսկոպոսներ, 1560 կղերներ, 1700էն աւելի վանականներ, 8,000 մայրապետներ, բանտի մէջ են 48 եպիսկոպոսներ և 3,700 կղերներ:

ՌԻԶԵՐԶ

Սիւրմէհան Սրբազան Տօքթ. Ա. Ալթունեանի յորելինական հանդէսին առթիւ իր խօսած ուղերձը՝ ապա գրի առած էր, զոր՝ մեզի ուշ հասած ըլլալուն՝ համար՝ չկարենալով ատենին հրատարակել այս թիւին մէջ՝ կը ներկայացնենք նոյնութեամբ:

Ը. Խմբ.

Գաղափարի փառայեղ տօն մըն է որուն համար եկեր հաւաքուեր ենք բոլորս, սա պահուն: Բեղմնաւոր կեանքի մը եւ մարդկութեան ծառայելու երկար շրջանի մը արդար պտուղն է որ եկեր ենք, վաստակաւոր Յորելեարին հետ, մենք ալ ճաշակելու: Մեծ է անշուշտ ուրախութիւնս, երբ ինծի կը վիճակի, սա պահուն, նախագահելու պատիւը, փոխանորդաբար, այս հանդէսին, նորին Ս. Օծութիւն Շնորհազարդ Տ. Սահակ Կիլիկիոյ Հայրապետին հեռագրական հրամանովը:

Շատ պիտի փափաքէի որ ծերունազարդ Հայրապետը անձամբ հոս գտնուէր եւ ինք իր կեանքի երկար տարիներէն քաղած փորձառութեամբը եւ գեղեցիկ դասերովը, ինք բերէր լաւագոյն գնահատանքը յիսնամեայ բժշկական ծառայութեամբը փառաւորող Տօքթօր Ա. Ալթունեանին: Ես, թերեւ, չկարենամ այդ երկար եւ արդիւնաւոր տարիներու ճշմարիտ գնահատանքը բերել հոս:

Միւս կողմէ, կը կարծեմ սակայն որ քննիմ անկեղծ երախտագիտութեան մը հարկը, ու այդ երախտագիտութիւնը կը խորհիմ որ մեծագոյն չափով իմ պատականութիւնս է. վասնզի վերջին վեց տարիներուն Հալէպի մէջ ունեցած դժ-

ուարին պաշտօնիս բերումով, չեմ յիշեր անցուցած ըլլալ շարաթ մը, ուրապակից դժբախտ հիւանդի մը համար զիմումը բրած չըլլամ բարեսիրտ Յորելեարին առանց մերժուելու: Մեծանուն բժշկապետը իր մատուցած անգին ծառայութիւններով, իրաւամբ կ'անցնի հայ բժշկապետներու լուսահոյլ փաղանգին մէջ ուր երբեմն Կ. Պոլսոյ մէջ փայլեցան, բժշկներ Սէրվիլէն, Նաֆիլեան, Խորասանճեան, Մաթէոսեան, Էսմէրեան, Սեդրոսեան, Թորգոմեան, և որոնց գիտական տաղանդը գնահատուեցաւ պետական, ազգային և օտար բարձր շրջանակներու մէջ: Տօքթ. Ա. Ալթունեան մեր բարեկամը, առանձին գնահատութեան արժանի է եւ անով իր նախաձեռնութեամբը հաստատուած անձնական հիւանդանոցը ճշմարիտ բարիք մը դարձած է, քառորդ դարէ ի վեր, այս մեծ քաղաքին ամէն ազգէրնակութեան համար: Մեր ցեղային ընտիր յատկութիւնները, մեր ազգային տաղանդին բազմորես զոյնելը օտար շրջանակներու մէջ ծանօթացնելու կարեւոր ազգակ մը եղած է հայ բժշկական դասը. եւ այս իրողութիւնը փայլուն կերպով կ'արտայայտուի սա պահուն, միջազգային այն ճոխ եւ ընտանի բազմութեամբ, որ իր գնահատանքը բերելու եկեր է յորելեար հայ բժշկապետին:

Ուստի ես յանուն Շնորհազարդ Տ. Սահակ Կաթողիկոսին, յանուն Ազգ. Առաջնորդարանի և հայ հասարակութեան, կուգամ իմ սրտագին խնդակցութիւնս ներկայել ձեզի, եւ անկեղծօրէն մաղթել որ ունենաք տակաւին առողջ եւ արդիւնաւոր տարիներու հոյլ մը, ասկէ վերջ, շարունակելու այն թանկագին ծառայութիւնը, որով մարդկութեան բազմատեսակ ցաւերը կարենաք ամոքել ձեր գնահատուած տաղանդովը:

Կը շնորհաւորեմ Տիկին Ալթունեանը եւ ձեր բոլոր պարագաները:

ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՇԵՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱՍՏՐ

Որո՞նք են պատմութիւնը շինող ազգակները: Տարբեր մարդիկ տարբեր պատասխան կ'ուտան այս հարցումին, իրենց որոշ տէսակէտէն դիտելով պատմութիւնը և կեանքը: Աշխարհագրական գիրք, տնտեսական որոշ հարցեր, ցեղին ժառանգական պայմանները, բնութեան մէջ տեսնուած յանկարծակի երևոյթներ, ինչպէս՝ հեղեղ, երկրաշարժ երաշտութիւն, մեծ փոթորիկներ, մշուշ և այլն—մարդուն բախտը որոշող պատճառներ եղած են: Հեղինակ մը Գերմանիոյ մէջ ժ.Պ. դարու Բարեկարգութեան ծագումը կը մեկնէր իբր զուտ տնտեսական պատճառներու մէկ արդիւնքը: Ուրիշ հեղինակ մը ուսումնասիրելով պատմութեան շարք մը մեծ դէպքերը, Ուաթերլոյի ճակատամարտը, Սպանիական Արմատայի արշաւանքը և այլն, անոնց արդիւնքը առաւելապէս կը վերագրէր օգիւրդոյթաբանական պատճառներու մշուշի, անձրեւի և այլն: Հիմա ալ Աւստրալիացի բժիշկ մը, Տոքթ. Մէքլորին, պատմութիւն մէջ ծանօթ կարգ մը դէմքերու կենսագրութիւնը ուսումնասիրելէ ետքը անոնց գործունէութեան մղիչ ազդակը կը գտնէ ախտաբանական պատճառներու մէջ: Ու կ'ըսէ. «Մարթին Լուտեր ականջի հիւանդութենէ մը եթէ չտառապէր Բարեկարգութիւնը պիտի ըլլար: Եթէ Ժանտ'Արքի զեղծերը բնականօրէն աղջիկներու մէջ եղածին պէս զարգացած ըլլային, անիկա Ֆրանսան ազատած պիտի ըլլար: Մեծազօր Կարոլոս Ե. եթէ արեան ճնշումի ենթարկուած չէր ըլլար Եւրոպան հիմակուան երկիրներու բաժնը ւած պիտի ըլլար:»

Ստորեւ կը ներկայացնենք այս բժիշկին կարգ մը տեսութիւնները անձերու և անցքերու մասին, քաղելով Science News Letter թերթէն: Ասոր

սկսելէ առաջ պէտք է հոս յիշել թէ կարելի չէ պատմութիւնը մեկնել ախտաբանական, օգիւրդոյթաբանական, ցեղաբանական, տնտեսական, աշխարհագրական տեսութիւններու ո՛չ ոնէ մէկուն և ո՛չ ալ հաւաքաբար բոլորին համեմատ: Ընդունելով հանդերձ ասոնց մէկ մէկն մէկուն որոշ դերը մարդկային բախտը շինելու մէջ՝ պէտք է ըսել թէ այս մեքենական նիւթական ոյժերէն վեր ոյժ մըն է որ ամէնէն աւելի բաժին ունի պատմութիւնը կերտելու մէջ: Այս է անձնաւորութեան, այսինքն անձնաւոր մարդու և Աստուծոյ—ոյժը: Կրնանք թերեւս ապահովաբար ըսել թէ մարդկային պատմութիւնը տակաւին լրիւ չէ գրուած, տակաւին զանկա չենք գիտի: Բայց կրնանք ըսել նաեւ թէ ամէն օրնոր լոյս մը կը ստանանք անոր մասին. շահեկանութենէ զուրկ չէ Աւստրալիացի բժիշկին ախտաբանական տեսութիւնը, որ թերեւ կրնայ կողմնակի ազօտ լոյս մը սփռել անցեալ կեանքի կարգ մը կէտերուն վրայ:

Ժ.Ն. դարու առաջին քառեակի միջոցին անգլիական բանակը գրաւած էր Ֆրանսայի մեծագոյն մասը: Ֆրանսայի հայրենասէրները գերագոյն և անհաւասար պայքարի մը մէջ մղուած էին իրենց հայրենիքը փրկելու համար: Ժանտարք, զիւղացի մանկմարդ աղջիկ մը, իր տեսած տեսիլքները և լսած խորհրդաւոր ձայները կը նկատէ իբր երկնային պատգամ մը, որուն անսալով ինքզինքը կը նուիրէ հայրենիքի փրկութեան և Ֆրանսական բանակին մէջ մտնելով կ'առաջնորդէ զայն դէպի յաղթանակ: Բժիշկ Մէքլորին Ժանտարքի մասին բոլոր պատմական գրութիւնները ուսումնասիրելէ ետք կը յանգի սա եզրակացութեան, թէ այս հերո-

սուհին ֆիզիքապէս թերի և միշտ անչափահաս մնայած էր։ Անոր անցնցող գեղձերը երբեք չէին զարգացած և բնականոն կերպով իրենց պաշտօնը չէին կատարած։ ասոր արդիւնքը ըլլալով ան իր մահուան ատեն իսկ փոխանակ իրապէս 19-20 տարեկանի մը պէս ըլլալու ֆիզիքական և մտաւորական կերպով 12-13 տարեկանի մը չափ զարգացած էր։ Եթէ Ժանտ'արք ուէ բնականոն ֆրանսուհիի մը պէս մեծցած և հասունցած ըլլար գիւղացիի մը կինը պիտի ըլլար, տեսիլքներ չպիտի տեսներ, ձայնիւր չպիտի լսէր, Ֆրանսոսն չպիտի ազատէր Անգլիացիներու կողմանէ խարոյկի չպիտի մատնուէր, հերոսուհի մը և սուրբ մը չպիտի ըլլար, կ'ըսէ Տոքթ. ՄէքԼորին։

Ժանտ'արք հազիւ 13 տարեկան, երբ առաջին անգամ ձայնիւր լսեց, զգաց թէ ինքը կոյս պիտի մնար, և երթալով սա գիտակցութիւնը աւելցաւ իր մէջ թէ ինք ուրիշ կիներու պէս չպիտի ըլլար։ Իր ֆիզիքական անբնականոն կազմը պատճառ եղաւ որ միտքն ալ չզարգանայ։ Այս վիճակը զինքը մղեց կատաղի կրօնասիրութեան և մաքրակրօնութեան զոր լաւագոյն կը ցոյցնէ սա պարագան թէ իր հրամանաւ բացարձակապէս արգիլուած էր ուէ կնոջ մօտենալ ֆրանսական բանակատեղին։ Ժանտ'արք արդամարդու զինուորական տարազով 13 տարեկան տղու մը կերպարանքը ունէր, բոլորովին տարբեր ըլլալով նկարիչներու և աւանդութեանց նկարագրած քառամեայ օրիորդէն։ Իր մօքին տըհասութիւնը կը փաստուի իր հարցաքննութեան ատեն տուած իր մանկունակ պատասխաններովը։

Բացի Ժանտարքէ ուրիշ մարդոց ֆիզիքական անբնականոնութիւններն ալ աշխարհիս պատմութիւնը չինկու մէջ բաժին ունեցած են և տակաւին կ'ազդեն ազգերու բախտին վրայ, կ'ըսէ հեղինակը։

Կարոլոս Ե. Սպանիոյ թագաւորը և կայսր, որ Մեծն Կարոլոսի և Նափոլէոնի մէջ և պատմութեան մեծագոյն դէմքն է, կը տառապէր պնդեցողութենէ, արդիւնքը բազմապարզ և յոգնատանջ աշխատութեան։ Հետեւաբար անոր մարմինը չկարենալով տոկալ կեանքի գերազանց ճնշումներուն գահը լքեց և 56 տարեկան հղած ատեն մեռաւ։ Պնդեցողութեան յաճախ կ'ընկերանայ անբնական նախադաշտութիւնը և վհատութեան նոպաներ։ Կարոլոս Ե. եթէ քիչ մը աւելի ապրէր և Ֆիլիպ Բ., իր յաջորդը՝ քիչ մը կարճ իշխէր Եւրոպայի պատմութիւնը տարբեր պիտի գրուէր։

Անգլիոյ Հէնրի Բ. թագաւորը լաւագոյն օրինակ մ'է ցուցնելու թէ հիւանդութիւնը որչափ կրնայ ազդել պատմութեան։ Այս թագաւորը կը տառապէր ֆրանկախտէ որ պատճառ եղաւ թէ՛ իր և թէ՛ իր ընտանիքին և շատ մը հպատակներուն դժբախտութեան։ Յըրանկախտի հետեւանքներն են մօքի անհասարակչութիւն, վատասիրում եայլն։ Հէնրի Բ. ի շատ մը անդուծ, բռնակալական արարքները, իր կիններուն և հպատակներուն հետ վայրենաբար վերաբերուիլը կարելի է այս կերպով բացատրել։ Ֆրանկախտի պատճառաւ Հէնրիի զաւակներէն չատերը ծնանելէն քիչ ետքը մեռան, և ետքը ստիպուեցաւ նոր կին հրով ամուսնանալ զահաժառանգ մը ունենալու համար։

Ռուսիոյ Չարը, Սարսափելին Իվան, կը տառապէր նոյն հիւանդութենէն, որ 100 տարի Անգլիոյ թիւաւոր թագաւորներու անէծքը և Անգլիոյ շատ մը տառապանքներուն պատճառը եղաւ։ Չար Իվան իր ունեցած ֆրանկախտին պատճառաւ իր կեանքը սկսաւ իբր գազան մը և զայն վերջացուց իբր յիմար մը։

Մեծ բարեկարգիչ Լուտիւր, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ աշխարհի յառաջդիմութեան վրայ, կը հաւատար որ

սատանան իրապէս իրեն քովը կը յաճախէր: Լուտեր կրնար անոր սուղելը լսել իր ականջներուն մէջ, կ'զգար թէ ան իր սիրտը ձեռքին մէջ կը սեղմեր: Դեւը երբեմն իրեն այնչափ գլխու պտոյտ կը պատճառէր որ իր աշխատած սենեակին մէջ աթոռէն կ'իյնար. և անգամ մը այնքան զայրացաւ որ իր կաղամարը նետեց զինքը չարչարող այս թշնամիին վրայ:

Իրականութեան մէջ, սակայն, խեղճ մարդը անկասկած Մէնիէթի հիւանդութենէն կը տառապէր: Ասիկա միջին ականջի մէջ պատահող հիւանդութիւն մըն է, որ միջին տարիքով և յօդացաւունցող մարդերու կը յարձակի: Ասոր ենթարկուողը կը տառապի գլխուն մէջ սարսափելի ձայներէ և գլխու պտոյտէ: Լուտերի ականջներն ալ կը ցաւէին, անոնցմէ հեղուկ մը դուրս կը հոսէր, և չէին լսեր: Այնպէս որ այս գլխու ձայներուն պատճառը անոր ականջի հիւանդութիւնն էր: Ահա այս է Աւստրալիացի բժիշկին կարծիքը պատմական այս նշանաւոր մարդերու մասին:

ՓՈՐՁԱՔԱՐ ՄԸ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Վերջին մի քանի տարիներու ընթացքին Ճարտնցիք սկսած են արուեստական աղամանդներ արտադրել՝ պտոնք բնականէն զանազանել զրէթէ անկարելի է: Այնպէս որ գիտական աշխարհը ստիպուած է միջոց մը գտնել զանազանելու բնականը արուեստականէն:

Մարդարիտ որսալու համար աշխարհի ամենաքաջ և ամենաճարպիկ սուզողները, ինչպէս նաև անոր ամենանախանձելի և յայտնի վաճառականները Ճարտնցիներ են: Զարմանալին հոն է որ ինչպէս Ամերիկացի կիներ քուէ-

արկութեան իրաւունք կը պահանջեն այնպէս ալ Ճարտնցի կիներ իրաւունք կը պահանջեն որ մարգարիտ որսալու գործին մասնակցին:

Փետրվարէն մինչև Դեկտեմբեր, 11 ամիս, այս երկսեռ գործաւորները ովկիանոսին յատակը կը սուզին օրը 25-35 անգամ, երկու վայրկեան ծովամոյն մնալու պայմանաւ և ամէն անգամին յիսուսի չափ ոստրէներ կը հանեն: 12 տարեկան աղջիկ մը 72 ոստրէ հանած ըլլալուն համար մրցանիշ մը շահած է ճարտնցիներու մէջ: Երբ ոստրէները դուրս բերուին, անոնց բերանները կը բացուին սուր և մեծ դանակներով: 3000-4000 ոստրէներու մէջ հազիւ մէկ հատը կը բովանդակէ մարգարիտ:

Ի՞նչ է մարգարիտը: Ոստրէն ծովուն մէջ ապրած միջոցին կարգ մը մակաբոյժներ կը յարձակին ոստրէին վրայ և անոր կեղեւէններս կը սողոսկին ու կը զրգռեն անոր կակուղ մարմինը: Այս զրգռումը ոստրէի մարմինէն հեղուկ մը կ'արտաբերէ, որ խաւ մը կը կազմէ: Եետոյ ուրիշ խաւեր իրարու վրայ դիզուելով կը կազմեն մարգարիտը:

1680 ին էր որ առաջին անգամ Զինացիներ արտադրելին արուեստական մարգարիտներ և բաւական տարիներ խաբեցին աշխարհը: Սակայն Զինացիներուն արտադրած մարգարիտները մեծապէս կը տարբերին բնականէն: Այս մարգարիտները կ'արտադրէին ոստրէի մարմինն մէջ մակաբոյժներ արձակելով:

Ճարտնցիներ ասկէ շատ աւելի յառաջ գացին և իրենց արուեստական մարգարիտներով շատ մը տարիներ աշխարհը զրազցուցին. քանի որ անոնց արտադրած մարգարիտները մինչև անգամ ամենահմուտ գիտուն մը չկրցաւ զանազանել բնականէն՝ քիչ մը հեռուէն: Սակայն վերջերս Անգլիացի գիտուն մը Հ. Ս. Հափթինզ, միջոց մը գտաւ րընականը արուեստականէն զանազանելու

համար, մարգարիտին վրայ լոյսեր ձգելով, քանի որ բնականը տարբեր և ոչ բնականը տարբեր գոյն չուգեր կը ձգէր։ Ասիկա փորձաքար մը եղաւ մարգարիտներու համար։

Թարգ. Ե. Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՇՈՒՆԵՐՈՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

Յաճախ շուներու զոհողութիւններն ու հաւատարմութիւնը կրնան մարդոց օրինակ ըլլալ առօրեայ կեանքի մեր փոխադարձ յարաբերութիւններու մէջ։

7000 տարիներէ ի վեր շուները մեր ընկերներն ու բարեկամներն են։ Պէտք է իբր ընկեր մը վարուելիք շուներու հետ, որպէսզի անոնց սքանչելի բարեմասնութիւնները ի յայտ բերենք։

Պրիսիլա զինուորի մը շունն էր։ Մեծ պատերազմի տառն խրամներու մէջ իր տիրոջը հետ կը շրջէր և յարձակումներու տառն անկէ անբաժան էր։ Իր տիրոջ քովն էր երբ այն զնդացիի հարուածէ մը վիրաւորուեցաւ։ Հաջելով ուշադրութիւն հրաւիրեց և կարմիր խաչի պաշտօնեանի պալով մարդը հիւանդանոց փոխադրեցին։ Շունն ալ անոնց հետեւեցաւ։ Շուներու համար արգիլուած ըլլալով հիւանդանոցն քով մնալ, զինքը դուրս գրին։ Բայց այնչափ ազաւանքի և վշտի ճիչեր արձակեց, որ գայն ներս առնելու ստիպուեցան։

Մարդը քանի մը ամիս վերջ հիւանդանոցէն առողջացած դուրս եկաւ, բայց այս անգամ շունը մարդուն կ'առաջնորդէր փախանակ մարդը շունին, որովհետեւ գնդացիի հարուածը մարդը իր աչքերէն զրկած էր։

Թարգ. Յ. Ն. ՊԱՊԻԿԵԱՆ

ԿՈՅՐԵՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՇՈՒՆԵՐ

Մեծ Պատերազմէն վերջ Գերման կառավարութիւնը պատերազմի ընթաց-

քին կուրացող զինուորներու համար իբր առաջնորդ ծառայող շուներ կրթեց։ Այս պարագայէն հետաքրքրուած Mrs. Dorothy Eustis, Ամերիկացի տիկին մը, շուներու համար վարժարան մը բանալու գաղափարը յղացաւ և 1923 ին Զուլիցերիոյ Լոզան քաղաքին մէջ «P'Oil qui voit» անուանով դպրոց մը հիմնեց։ Այս ձեռնարկը կոյրերու համար ամէնէն մեծ ծառայութիւնը եղած է։

Այս նպատակին համար ամենայնարժար շուները հովուի շուներն են, որովհետեւ անոնք զօրաւոր են և երկար դարերէ ի վեր պատասխանատուութեան, պահպանութեան և հոգատարութեան բնավորները մշակուած են անոնց մէջ։

Այս դպրոցին մէջ վարժութիւնէ աւելի կրթութիւն մըն է որ կը տրուի, որ երկու շրջաններու բաժնուած է։

Առաջին շրջանին՝ շունը սանձուած իր ուսուցչին հսկողութեան տակ՝ բաղամասունն պողոտայի մը վրայ կ'երթեւեկէ և ամէն արգելքի և խոչնդոտի առջև կատարելիք շարժումները կը սորվի, զոր օրինակ զլուսը շարժել, կայնիլ, նստիլ, հաղաւալ և այլն։ Երբ ասոնք կատարելապէս իւրացնեն՝ կոյրի մը կը յանձուր։ Ասիկա իր կրթութեան երկրորդ շրջանն է։ Հիմա՝ շունը իր տիրոջ հետ նոյն փորձերը կը կատարէ, նախ նոյն պողոտային և յետոյ ուրիշ պողոտաներու վրայ։ Այս վարժութիւնը աւելի յառաջ տարուելով շունը իր տիրոջ ամէն շարժումներուն և հրամաններուն կը հնազանդի և կոյրը կրնայ ա'լ ամէն տեղ երթալ, իր շան առաջնորդութեամբ։

Թարգ. ՅՈՎՀ. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՇԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Կրթեցի շնիկս այնպէս ինչպէս մանուկ մը, կ'ըսէ Սքոթի Ալէն։

Նախ վարժեցուցի կարգ մը բաներու,

որոնք թէ՛ վարքը ազնուացուցին և թէ՛ իր իմացականութիւնը նրբացուցին, այնպէս որ բոլոր շարժումներուն հնազանդեցաւ առանց ուէ հակառակութեան և տան անդամներէն մին հանդիսացաւ:

Հնազանդութենէն վերջ, փափաքեցայ որահի վերաբերեալ կարգ մը նուրբ խաղեր սորվեցնել, որոնք հաճոյալի էին: Օրինակ, առարկայ մը վերադարձնել, կէս փակ դրան ձեւը առնել, հողաթափներս բերել, փայտանոցէն փայտ բերել և փայտի սնտուկը լեցնել, և այլն:

Ծնրկս զգայուն էր, այնպէս ինչպէս մարդ մը որ կը մասնակցէր իմ տրտմութեանս, ու կը ջանար շարունակ խրախուսել զիս և հրճուեցնել: Ան իր սրամտութիւնը կը զգացնէր շարունակ իմ ներկայութեանս, առաջնորդելով ու վտանգէն խուսափեցնելով զիս:

Թարգմ. Յ. ՔԷՆՏԻՐՃԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԷՅՐՈՒԹԻ ԶԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻԷՆ կը գրեն.— Մայրերու Միութիւնը դարձեալ սարքեց ձեռագործի զաճառահանդէս մը, որ տեւեց երկու օր, և որուն զուտ շահը եղաւ 20 Օսմ. ոսկի: Իրապէս այս Միութեան ջանքը խիստ գնահատելի է: Անոնք՝ իրենց անխնայ ծառայութեան արդիւնքով երկու տարիէ ի վեր բացուած Մանկապարտէզի շարունակութիւնը կարելի կ'ընեն:

Ծնունդի առթիւ Եկեղեցիի Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ Ուէպքոյրերու և Միս Տէյվիսի օգնութեամբ, Եկեղեցիի մէջ Յիսուսի կեանքը ցուցադրուեցաւ Մոզական լապտերով: Հրաւիրուած էին քաղաքի Հայ Աւետարանական Վարժարանաց ինչպէս նաև Ար. Նշան Ազգային Վարժարանի աշակերտութիւնը: Հանդէսը անցաւ խիստ փայլուն ու ապաւորիչ:

Նոր Տարուայ առթիւ եղաւ պաշտամունք մը: Երեք բանախօսներ՝ անդլիերէն, հայերէն և թրքերէն լեզուներով աւժոփ կերպով իրենց պատգամները բերին 'ոժ բաղմութեան:

Յունուար 6 ի Ծնունդի պաշտամունքին խիստ շատ բաղմութիւններ կայ էր: Մր. Ֆաքս անգլիերէն, Պատ. Յ. Արգարեան թրքերէն, Իսկ Հովիւը հայերէն լեզուով խօսեցան: Երգիչ խումբին երգերը աւելի տպաւորիչ և խորհրդաւոր դարձուցին պաշտամունքը: Գանձանակի հասոյթը, մօտ 7 Օսմ. ոսկի, Մամլթէյնի հիւանդանոցին յատկացուեցաւ:

Եկեղեցիին Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ և Փրոֆ. Զ. Պէզճեանի նախագահութեամբ ընտրուեցաւ Լսարանական Վարչութիւն մը, որուն նպատակն է առաջին՝ Հայ հասարակութիւնը տարբեր նիւթերու շուրջ լուսաւորել, և երկրորդ՝ Հայ հասարակութիւնները՝ առանց յարաճուածական և կուսակցական խտրութեան՝ իրարու մօտ բերել: Ամէն երեք շաբաթը անգամ մը սոյն լսարանը կ'ըլլայ: Մինչև հիմայ խօսեցան Տօքթ. Թօփեան, «Խնչ արգիւնաւոր գործունէութիւն կրնայ ունենալ Հայութիւնը Սուրիոյ մէջ» նիւթին վրայ, Ծահէ Ծայրագոյն Վարդապետ «Ամերիկահայութիւնը» նիւթին վրայ, և Վեր. Հ. Բիկլ «Մեքենագիտութիւնը» նիւթին վրայ: Գեղարուեստական բաժինը կը կատարուի զաշնակով, ջուլթակով, մեներգով և այլն: Ժողովուրդը շատ կ'օգտուի:

ՅՈՒՆՎ. ԳԻՐԻԿՈՒՆԸ, Հալէպի Քաղաքի Աւետ. Եկեղեցիի Ազգական Զանաւորացը իր անդամներուն սիրայօժար աշխատանքով և նիւթական պղարիկ գոհողութիւններով համեստ պազար մը պատրաստած էր, ուր կային համեղ տետիկքներ և օրփորդներու շինած ճաշա-

կաւոր ձեռագործներ, որոնք մէկ ժամ չաւած ծախուեցան գնողներու շատութենէն: Պաշարը լրանալէն վերջ արած մը ներկայացուեցաւ: Երբ վարագոյրը բացուեցաւ բեմին վրայ հրեցաւ մարդկութիւնը ներկայացնող ազնիւ մը, որ աշխարհի բազմապիսի հոգերէն կ'փափակէր իր տառապանքը և կը փրկէր ինքն իր կամ ազատութեան միջոց մը: Նմանապէս ազգերու ներկայացուցիչներ վիշտերու և հոգերու ծանրութենէն յուսահատ, լուռ ու մունջ անցան գացին: Երբ Մարդկութիւնը յուսահատած գետին ինկաւ՝ հրեշտակը ներկայացաւ, գայն սթափեցաւ, յուսադրեց և տարաւ, իսկոյն ջուրոց բացուած վարագոյրին ետեւ երկնային տեսիլ մը երկրի վրայ: Կենդանի պատկեր մ'էր այն, որ կը ներկայացնէր մահկացած Յիսուսը մոտերին մէջ՝ չըջապատուած իր ծնողքէն, հովիւներէն ու սուրբ հրեշտակներէն, հեռակառէ այս տեսարանին ձգտեցան Մարդկութիւնը, մոգերը, ազգերը, բնութիւնը և գալիք մարդկութիւնը: ամէնքն ալ խոնարհեցան գոհունակութեամբ մոտերին առջև և միահագոյն երգեցին «Մուրբ ես»ը, անուշ մեղեդիով ու վարագոյրը գոցուեցաւ: Տրամը թէպէտ կարճ էր, տպաւորութիւնը, սակայն, խոր և մեծ եղաւ: Ժողովուրդը գոհունակութեամբ մեկնեցաւ, իր մէջ իրապէս զգալով Յիսուս Փրկչին Ծննդեամբ տրուելիք ուրախութեան ազդեցութիւնը:

Գովելի, դնահատելի և շնորհաւորելի էին անձնիւր անդամի ջանքերը:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՍԵԼԱՆԻԿԻ ՀԱՅ ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ մէջ՝ Յունվ. Յին տեղի ունեցաւ Պատկ. Ս. Ֆարանգեանի նախաձեռնութեամբ կազմուած երկուս եր. Ք. Ջանասիրաց ընկերութեան բացման հանդէսը: Կատարուցանեց օրդան պատշաճ արարա-

սանութիւններ, քառաձայն երգեցողութիւն և նուագ:

Ներկայ էր արտասովոր խուռն բազմութիւն մը, ասոնց համար խիստ քաջալերիչ էր տեսնել նորակազմ անդամներուն արտայայտած կրօնաբարոյական զգացումները: Ստեղծուած էր հոյեւոր տաք մթնոլորտ մը, ներկայ եղող մօտաւորապէս 450 հոգիներու մէջ:

Յայտագրին մէջ կեդրոնական տեղը տրուած էր երեք հոգեւոր պետերու բանաստեղծութիւններուն: Ասոնցմէ մին բանաստեղծութեամբ և կը բացակայէր, իսկ միւս երկուքը ի մէջ այլոց ըսին:—

Այսօր Ե. Ք. Ջանից Ընկերութիւնը կազմակերպուած հրապարակ կ'իջնայ և ան կը ջանայ և կը խոստանայ իր թագուն ուժերը գործածել ժողովուրդին կրօնակրթական, բարոյական, ընկերային և հոգեւոր մակարդակները բարձրացնելու: Ինք յարատեւութիւն և յաջողութիւն կը մաղթենք: Տար Աստուած որ այս Ընկերակցութիւնը իր կարողութեան սահմանին մէջ և առաւելագոյն չափով ծառայէր՝ նախաձեռնոր ըլլալով Սեւանիկի հայութեան ներքին կեանքին սրբութեան, բարեօքման եւ պայծառութեան:

Հանդէսէն վերջ հաւաքոյթը վերածուեցաւ երկոյթի: Ներկաները պատուասիրուեցան անուշիղէններով և մըտերմական մթնոլորտին մէջ հաճելի ժամանց մը վայելիլէ վերջ բաժնուեցան «Հայր մեր»ը երգելով և իրենց հետ տանելով հոգեշունչ հանդէսի եւ շինիչ երկոյթի տպաւորութիւնները:

Խթման զիշերը ընկերակցութիւնը «Աւետիսի խումբ» մը կազմելով տուները այցելած և քառաձայն երգեր երգած է: Այս առթիւ ընտանիքներէն ընդունուած նուէրներու գումարն է 2100 Տրամի (28 տոլար), որ յատկացուած է բարեգործական նպատակներու:

Ընկերութեան կողմէ նաեւ պիտի

բացուի ժողովրդային լսարան մը, որ
ամիսը անգամ մը օգտակար նիւթերու
վրայ դասախօսութիւններով և ուրիշ
կերպերով պիտի ծառայէ ժողովուրդին։
ԲՍՐԷԼՈՒՐ

ՁԱՀԼԻ Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւը
Վեր. Յակոբ Շնորհոսեան կը գրէ. — Պաալ-
պէք այցելութեան գացի։ Հոս կան
մօտ 28 Հայ ընտանիքներ, որոնց էրիկ
մարդոց կէսէն աւելին զինուորներ են։
Հոս ո՛չ Առաք., ո՛չ ալ Հայ Աւետ. Ե-
կեղեցի ունինք։ Ժողովուրդը հոգևոր
միաթաւրութենէ թուրովին զուրկ է։
Երբեմն Րազդայի քահանան կ'այցելէ
զիրենք. ևս ամիսը անգամ մը կ'այցե-
լեմ, սակայն ժողովք չենք ունենար,
միայն տունները այցելութիւններ կը
կատարուին։ Այժմ Պաալպէք կան ե-
րեք Հայ Աւետ. ընտանիքներ, որոնք
Այնթապէ, Ուրֆայէ, Պէշլանէ, հոս
գաղթած են։

Դիշերը հոն անցնելով՝ Յունվր. Էրն
օթոյով միշտ գէպի վեր մագլցելով մէկ
ու կէս ժամ ետքը՝ Րաս Պաալպէք կը
հասնինք, որ մօտ 200 տուն գուտ Մա-
րոնիներէ բաղկացեալ գիւղ մըն է։ Հոս
Արաք Բողոքականներու կողմէ կառա-
վարուող դպրոց մը կայ 65 աշակերտնե-
րով, սակայն ժողովուրդ չունին։ Հոս
կայ նաև Թրանսայի հարիւրապետ մը
120 միլիոն զինուորներով, որոնց 11ը
Հայ են։ Հայերը 12 ընտանիք ունին ո-
րոնց չորսը կազմուած է Մարոնի աղ-
ջիկներու հետ ամուսնութեամբ։ Միայն
մէկ Բող. ընտանիք կայ։ Տարիներէ
իվեր ո՛չ Հուսաւորչական ո՛չ Բողոքա-
կան ուէ եկեղեցական մը չեն տեսած։
Շատ ուրախութեամբ մեզ ընդունեցին
և իրենց վիշտն ու բաղձանքը յայտնե-
ցին։ Մեծապէս քաջալերեց զիրենք
մեր հանգիստը։ Մենք ալ խոստա-
ցանք ինչ որ մեր պարտքն է։

Նոր տարիին առթիւ պաշտամունքը

կատարուեցաւ Արաք Բողոքականներու
հետ մեկտեղ, նոյն եկեղեցւոյ մէջ։ Մի-
քանի երգեր զատ զատ երգեցինք, մի-
քանի երգեր ալ արաբերէն, հայերէն և
թուրքերէն լեզուներով միասին երգե-
ցինք, որ շատ անոյշ կը հնչէր։ Եզրայ-
րութեան ոգին կը տիրէր ամենուն վը-
րայ։

ՊԵՅԼԱՆԻ ուսուցիչ — քարոզիչը, Պատ.
Յ. Կիւրլէքեան կը գրէ. — Մեր դպրոց-
ներուն մէջ ներկայիս 132 աշակերտ ու-
նինք, մանչ եւ աղջիկ։ Նախակրթա-
րանին մէջ ունինք 64՝ 3 ուսուցիչներով
(եւ ալ մէջը) և 4 կարգով։ Մանկա-
պարտէզին մէջ ունինք 68 աշակերտ-
ներ, օրիորդ մը եւ իրեն օգնական մը։
Կադանդի առթիւ մանկապարտէզի յա-
ռուկ հանդէս մը սարքեցինք, տեղիս
Հայ հասարակութիւնը եկած էր, նոյն-
պէս Միւտիրը և մի քանի ուրիշ հա-
ւիրեալ պաշտօնեաներ։ Այս տարի
դպրոցական տուրք ալ կը հաւաքենք։

ՀԱԼԷՊ ՔԱՂԱՔԻ Եկեղեցիին Դպրո-
ցասիրաց Ընկերութիւնը հաւաքութ՝ մու-
նեցաւ Յունվ. 22 ի իրիկունը, մասնակ-
ցութեամբ 90 անդամներէ 60 ին։ Ներ-
կանիւրը հաճոյքով վայելեցին երիտա-
սարդներու նուագած եղանակները և
Պիւքի անուշէղէները։ 1931 ի Վար-
չութեան անգամ ընդունուեցան 5 երի-
տասարդներ և 4 կիներ։ Մեծապէս զը-
նահատելի է նման գործերու մէջ փոր-
ձառու եղած Տիար Նազար Արշեանի
սիրայօժար մասնակցութիւնը այս մարմ-
նին։ Գրթական հաստատութիւններուն
օգնելու համար այսպիսի ընկերութեանց
գոյութիւնը անհրաժեշտ է։ Մեր հոս
տեղաւորուելէն իվեր, մօտ տասը տա-
րուան միջոցին, միայն այս եկեղեցին
դպրոցիչէնքերուն իբր վարձք վճարած
է աւելի քան 1,000 ոսկի։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազատ քաղաքացիական Չարս Տիբեցի
գրողականներին

ԳԼՈՒԽ Գ.

«Աստուծոյ ապաստանելիք տեղ մը կամ
ապրելու միջոց մը չունի՞նք», հարցուց
Սքրուճը:

—Այս տեղ բանտ չիկա՞յ, հարցուց
Ոգին, միթէ գործատիներ չկա՞ն:
Սքրուճի միտքը ինկան իր խօսած
բաները՝ և . . . Ժամը 12 ը պարկաւ:
Սքրուճ իր շուրջը նայեցաւ, Ոգին չկար:
Այն ատեն ճէյքը պիտի ըսած խօսքը
միտքն ինկաւ, և աչքերը վերցնելով՝
տեսաւ որ թոյլ զգեստներ հագած ու
զլուխը ծածկած մառախուղի նման տե-
սիլը մը գետնին վրայէն կը յառաջանար
դէպի իր կողմը:

ԳԼՈՒԽ Գ.

ՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆԸ

Տեսիլքը դանդաղօրէն, լուրջ ու լուռ
կերպով կը մօտենար: Երբ իր քով հա-
սաւ, Սքրուճ ծնրադրեց՝ որովհետեւ Ան
իր անցած տեղերուն վրայ տխուր մա-
ռախուղ մը և խորհրդաւոր տպաւորու-
թիւն մը կը թողուր: Անիկայ մութ
սեւ գոյն վերարկուի մը մէջ ծածկուած
էր, այնպէս որ ո՛չ մարմինը, ո՛չ զլուխը,
ո՛չ ալ մարմնոյն ոտէ մէկ մասը կրնար
տեսնուիլ, իրաց առեալ մէկ ձեռքէն՝ որ
դուրս երկարած էր, և այս պատճառաւ
չատ դժուար էր զայն զանազանի վի-
շերուան խաւարէն՝ որ զինքը չըջապա-
տած էր: Երբ Ան մօտեցաւ Սքրուճը զ-
գաց որ երկայնահասակ և խոշոր մար-
մին մ'ունէր, և զգաց նաեւ որ անոր
խորհրդաւոր ներկայութիւնը զինքը
պատկառանքով ու վախով կը լեցնէր:

ասկէ աւելի բան մը չէր կրնար մտածել
որովհետեւ Ոգին ո՛չ կը խօսէր, ո՛չ ալ
կը շարժէր:

«Գալիք Թնուհդի Ոգինն առջեւն է
որ կը գտնուիմ», ըսաւ Սքրուճը:

Ոգին չպատասխանեց, այլ միայն
իր ձեռքովը դէպ յառաջ ցոյց տուաւ:

«Միթէ ինծի ցոյց պիտի տաս ասկէ
հոքը ըլլալիք բաները», հոսքիչ մը կե-
ցաւ Սքրուճը, և ապա շարունակեց ըսե-
լով, «Այսպէ՞ս է, ո՞վ Ոգի»:

Զգեստին վերի մասը կծկուելով մի
քիչ ծալուեցաւ, իբր թէ Ոգին զլուխը
ծռեց: Միայն աս էր Սքրուճի առած պա-
տասխանը:

Սքրուճ թէն ոգիներու հետ գտնուած
էր ցարդ, սակայն ասոր լուռ կենալէն
այնքան վախ զգաց՝ որ ոտքերը սաստիկ
կը զոլային, և երբ կը պատրաստուէր
անոր հետեւիլ, տեսաւ որ շատ դժուա-
րաւ ոտքերուն վրայ կրնար կայնիլ:

Ոգին անոր վիճակը տեսնելով, վայր-
կեան մը կանգ առաւ, որպէսզի Սքրուճ
ինքզինքը գտնէ: Սակայն Սքրուճ
աւելի գէշ եղաւ, ու ալ աւելի սոսկաց
խորհելով թէ այդ խաւար զգեստին հետեւ
Ոգիի աչքերը իր վրայ անեղած էին, մինչ
դեռ ինք որչափ ուշադրութեամբ իսկ
նայէր, չէր կրնար ուրիշ բան նշմարել,
բայց միայն ոգիին ձեռքը և մեծ սեւ,
զանգուած մը:

«Ով Ապագայի Ոգին», Գոչեց նա:
«Ես ասկէ առաջ տեսած ոգիներէս ամէ-
նէն աւելի քեզմէ կը վախնամ, բայց
քանի որ գիտեմ թէ քու նպատակդ ինծի
բարիք ընել է, և քանի որ կը յուսամ թէ
ասկէ հոքը եթէ ապրիմ աւելի լաւ մարդ
մը պիտի ըլլամ, ուստի պատրաստ եմ
քեզի ընկերանալու շնորհակալ սրտով
մը: Միթէ իմ հետս չը պիտի խօսիս»:

Ոգին պատասխան չը տուաւ: Զեռ-
քը միշտ դէմը ցոյց կուտար:

(Շարունակելի) (28)

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԷՃ

Եթէ բնութեամբ խնայողական (economist) ես եւ կը սիրես ամէն բան չափաւոր գնով շինել՝ սա՛ղ դիմէ՛

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԷՃԻ

Բանգի ան՝ ամէն պիւրութիւն ունի՝ ոեւէ մէկէն աւելի զեղջեալ եւ ածան գնով կասարելու ապսպրանքներդ։ Այցաբարձեր, պահարաններ, հասցէներ, փոխգրեր, սաւցագրեր, եւ ամէն ճեսակ վաճառականական գործեր եւ մինչեւ իսկ գրքեր։

Եթէ նրբանաւակ մէկն ես, եւ հազա՞ծ կօշիկներուդ մէջն իսկ փչեաս նորաձեւութեան եւ կոկիկութեան կարեւորութիւն կուտաս, պարտքս դիմել ՏՊԱՐԱՆ ԳՈՒԷՃԻՆ, ԲԱՆԳԻ՝ մարդու մը սպագրուած գործերը աս անգամ իր հաւակին հայելին են։

Իսկ եթէ Հալէպ Գոլէնի հանդէպ բարի կամեցողութիւն ունեցող բարեկամ մըն ես եւ կ'ուզես օգնել կարօտ աւակներներուն՝ որոնք սպարանի միջոցով իրենք իրենց կ'օգնեն. գործերդ յանձնէ՛ Տպարան Գոլէնին, որ երկու ճեսակ շահ կ'ապահովէ՛ քեզի, թէ նիւթական եւ թէ բարոյական։

ՉԵՐՉԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պէվապէթ Էլ-Գասապ (գամբո զափը)

ՀԱԼԷՊ

Յարմար գիներով հոս կը ծախուին ամէն ճեսակ բուդքեր, ընթերցանութեան գիրքեր, դասագիրքեր, գրասենեակի առարկաներ, Ս. Գիրքեր եւ Ս. Գրքի մասեր, կրօնական գիրքեր, ֆարս-փոսքալներ, եւայլն։

ԴԻՄԵՅԷՔ ԱՆԳԱՍ ՄԸ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՐ

“ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ,”

Ձեռքէ կը ծախուի Չերչեան Գրասան մէջ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Խմբագրին հիւանդութեան և տպարանական դժուարութեան համար կը ջաշինք որ կարելի չեղաւ վերջին թիւերը առնին հրատարակել, որուն համար յարգոյ ընթերցողներուն ներողութիւնը կը խնդրենք։ Յաջորդ երկու թիւերը պիտի հրատարակուին 28 աւան էջ, առաջինը պիտի թուագրուի, թիւ 3-4, և երկրորդը թիւ 5։ Թերթս կը հրատարակուի առաւել կէսին և վախճանին։

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՇՈՒԹԻՒՆ
ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(Կոչնակի երեսնամեակին Սուրբիւ)

Հայ գաղթականներէն անոնք որ Կոչնակի կանոնաւոր բաժանորդագիրն (5 տօլար) վճարելու անկարող են, պիտի կրնան, բացառաբար, 1931—1932-ի տարեշրջանին համար, նոր բաժանորդ արձանագրուիլ,—

ՏԱՐԵԿԱՆ \$3.00-Ի ՓՈԽԱՐԷՆ

Ասիկա կարելի եղած է, չնորհիւ ԲԱՐԵՍԷՐ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԸ՝ որ Կոչնակի երեսնամեակին առքիւ, մինչեւ \$500.00-ի գումար մը տրամադրած է, պայմանաւ որ, նոյնչափ զոհողութիւն մ'ալ խնք յանձն առնենք, որպէս զի Հայ գաղթականներէն, մինչեւ 500 հոգի, դիւրութիւն ունենան, Կոչնակին նոր բաժանորդ արձանագրուելու ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ՏՈՒԱՐՈՎ:

Այս պատեհութիւնը կը տրուի միայն հետեւեալ երկիրներու հայ կարօս գաղթականներուն.— ՀԱՅԱՍՏԱՆ, ՍԻՒՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱՂԳԱՆԵԱՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՖՐԱՆՍԱ, ՊԱՂԵՍՏԻՆ, ԷՒ ԿԻՊՐՈՍ:

Զեղչեալ բաժանորդագիրն, 3 տօլար, պէտք է զրկել կանխիկ:

Այս պատեհութիւնը պիտի տևէ 6 ամիս, մինչեւ 1931 Մարտ 31:

GOTCHNAG PUB. CO. 331-Fourt Ave., New York, N. Y.

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE
 ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان